COLUMBIA UNIVERSITY
THE
LIBRARIES
IN THE CITY OF NEW YORK

Generated on 2018-06-08 12:28 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-08 12:28 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-08 12:28 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԲՈՂՈՔԻ ՁԱՅՆ

(ՑԱՐԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔԻ ՄԻ ԷՋ)

1911
ԹԻՒ 20, ՀՐԱՏ. "ՀԱՅՐԵՆԻՔ,,Ի
ՊՕՍԹԸՆ

Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:27 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2018-06-08 12:27 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-08 12:27 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-08 12:27 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Akuni, E.

Է. ԱԿՆՈՒՆԻ

Boghok'i dzayn

ԲՈՂՈՔԻ ՁԱՅՆ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

(ՑԱՐԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔԻ ՄԻ ԷՋ)

1911
ԹԻՒ 20, ՀՐԱՏ. "ՀԱՅՐԵՆԻՔ,,Ի
ՊՕՍՔԸՆ

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Butler Stacks
DS
195
.A312
1911g

Generated on 2018-06-08 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
COLUMBIA UNIVERSITY

99-01-26АНС

Գլուխներ՝

Դիմումն
Շղթայի սեխտարիք
Պատմական տկնարկ
1908-ի բռնաբարկեալներք
Խուցերի մէջ
Պատճառներք
Բնութիւն
"Դատապարտութեան Դուռք"
Միապետական ռուս բիւրոկրատիան
Միջազգային բողոք
Ցաւելուած

A114 8055

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այս գիրքը, գրուած
Ամերիկեան հաստատութեան համար, լոյս է տեսել
Անգլերէն լեզուով:

Generated on 2018-06-08 12:19 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

ԴԻՄՈՒՄՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Այս անշօր գրչով և անպաճոյճ խօսքերով ձեզ եմ դիմում, Մեծ Հանրապետութեան մտաւորականներ և գրողներ, ձեր լեզուին, ձեր գրչին, ձեր սրտին մանաւանդ։

Անուամբ և գործով ձեզ անծանօթ մի հայ գրողի ներկայ քայլը համարձակութիւն մի՛ համարէք։ Իմ համեստ անցեալը և թոյլ գրիչը չէ, որ իրաւունք է տալիս ինձ՝ հրապարակով խօսել ձեզ, այլ այն՝ որ ես պատկանում եմ մի հալածական ազգի, գուցէ, աւա՜ղ, անդրանիկը մարդկային զոհերի պատմութեան մէջ, փոքր իր թըւով, բայց մեծ իր տանջանքով, աննշան իր քաղաքական կացութեամբ, բայց արժանի յարգանքի իր զոհերով, որ տուեց քաղաքակրթութեան և ազատութեան համար։

Վիրաւորեալ, հալածական հայ ժողովրդի վիշտը ու ցաւն է, խոր ու անհուն, որ խօսեցնում

Generated on 2018-06-08 12:19 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

է ինձ, ինչպէս և ներկայ ամբողջ հայ մտաւորականութիւնը, որի մի համեստ գինուորն եմ ես, վեշտ ու ցա՛ւ, որ քարերն անգամ լացուցին, որ անսանձ բորբոքման օրերին, փոթորկեցին քաղաքակիրթ աշխարհը, Հռովմից մինչև Լօնտօն, Պարիզից մինչև Նիւ Եօրք, նոյնիսկ նրանց, որ կուրծք ունեն, բայց սիրտ չունեն, գլուխ ունեն, բայց միտք չունեն։

Զայն բարձրացրէք դուք, որ և՛ սիրտ, և՛ միտք ունէք, և իբրև ազատ Հայրենիքի քաղաքացի՝ մարդկային պարտ ունէք, բողոքի ձայն հնչեցնելու, յօգուտ «անմեղ մեղաւորների», որոնք ճզմուած փականաւոր դռների յետևը, սըրտատրոփ սպասում են, յանուն իրենց բազմատանջ ժողովուրդի, համակրանքի նշաններ, արդար բողոքի ձայն։

Ցաւախ ասացին ինձ՝ Եւրոպա, և՛ այստեղ, ձեր երկրի մէջ, թէ ունայն են կոչն ու հրաւէրը, ունայն տանջուողների յոյսը, որևէ սպասելիք — Ամերիկան՝ գաղափարի և բողոքի երկիր չէ, այլ միայն դրամի և գործի։ «Ամերիկեան վիթխարի մամուլը՝ արդարութեան և գաղափարի գինուորը չէ, նա ծառայում է՝ Մամօնային, և Մամօնայի միջոցով դարձեալ Մամօնային»։

Դուք աւելի քան ես՝ գիտէք թէ որքա՛ն ճիշդ է այդ տխուր մեղադրանքը։ Բայց, ես որ պտըտեցի Աստրաղլանդեան Հանրապետութիւնը մի ծայրից մինչև միւսը, քաղաքից քաղաք՝ նահանգից նահանգ, ինչ որ տեսայ և դիտեցի, ուրախ եմ ասելու՝ ինձ չրջանակում է այն համոզման մէջ, որ Ամերիկան միայն «գործաւորի աշխարհ» չէ, այլև աւանդապահը՝ մեծ գաղափարների։

Generated on 2018-06-08 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Այո՛։ Մի երկիր, ուր այնքա՜ն բարձր է Լինկոլնի և Ուոշինկտոնի հմայքը, մի երկիր, ուր գործարանների ծխնելոյզների կողքին, մրցաբար, բարձրանում են յեղափոխութեան, անկախութեան և ազատութեան կոթողները, ուր հսկայ խանութների և զարճավայրերի կից՝ հպարտօրէն բարձրանում են հսկայ համալսարանները, այնքան յարգուած վիթխարի գրադարանները, լի մարդկային հանճարի ու մտքի բոլոր պտուղներով, մի երկիր, որի վերանորոգիչ և ռամկավար ոգին կործանեց հին-աշխարհի պատմական, կաշկանդիչ շատ նախապաշարումները, և որը Մեծ-Քաղաքի ծովածոցի մէջ, ամէն երեկոյ համաշխարհային Ազատութեան ջահն է վառում — չը պէտք է և չէ կարող լինել անսիրտ, անարձագանգ, անտարբեր, դասալիք մեծ գաղափարին հանդէպ։

Արևելքի տանջուող ազգերը ձեզանից «միջամտութիւն» չեն պահանջում։ Ո՛չ։ Կարիք չկայ խառնուելու ուրիշների գոնայէն վէճերի մէջ։ Բայց ինքը, ձեր Մեծ Քաղաքացին, եթէ գերեզմանից վեր կենար, չէր կարող անցնել մահամերձ զարկուածի մօտով, առանց ծունկ չոքելու տանջուողի առջև, դահիճի մօտով, առանց ցասումի և վրդովմունքի, գետնատարած վիրաւորի մօտով, որի շարունակում են զարկել գայիսօնով, չպօրներով ու թրով։

Ո՛չ միջամտութիւն, այլ ՖՕԼՕՓ, երբ խողխողվում են ամբողջ ազգեր ու երկիրներ։ Բողոք՝ յանուն ՅՕՐԴՕՍ, որի պաշտամունքը այնքան մեծ է ձեզ մօտ, բողոք՝ յանուն ազատութեան, որի համար այնքան արիւն ուիք՝ մեծ-

կուի օրերին, բողոք՝ յանուն մարդկային հասարակութեան, առանց ցեղի և կրօնի խտրութեան — սիրասուն գաղափարը ձեր նորատիպ Հայրենիքի։

Գիտեմ, զգում եմ, դուք շատ էք հեռու պատմական Արարատի շուրջը ընկած Վշտաձորից, բռնապետական տիրապետութեան այն վայրերից, ուր ա՛յնքա՞ն տիրական է կնուտը, եաթաղանը, զնտանը։ Բայց ահա, այս թոյլ տողերով բերում եմ ձեզ տժգոյն պատկերը ահաւոր ողբերգութեան, մի էջ, մի փոքրիկ երես միայն, այն խորունկ սոսկումների, որոնք կատարվում են փակ Դռների յետևը, որտեղից տարիներից իվեր արդէն հնչում է ճիչը կալանաւորների, և դրան կից ցասումն ու բողոքը բոլոր հալածականների։

Ականջ դրէք այդ ձայնին, լսեցէք այդ ցասում ճիչերը։ Լսեցէք՝ ու ասացէք այն՝ ինչ կը թելադրէ ձեր միտքը, ձեր սիրտը, ո՛չ թէ կարեկցողի, այլ համակրողի սիրտը։

Դրէ՛ք սրտի մի կտոր ձեր ձայնի, ձեր բողոքի, ձեր գրչի մէջ։

Շարժեցէ՛ք գրիչը, գրողներ բոլոր ազգերի։
Բացէ՛ք լեզուները, հռետորներ բոլոր երկրների։

Է. ԱԿՆՈՒՆԻ

1911 Ապրիլ
Նիւ Եօրք

Generated on 2018-06-08 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ԹՂԹԱՑԻ ԱԾԽԱՐՀԸ

Խուզարկութիւն՝ գիշերները։

Բանտարկութիւն՝ ցերեկները։

Այս է «քաղաքական կեանքը» Կովկասի մէջ, սկսած 1908-ից, ուր հայ ժողովուրդը, ցարական կարգադրութեամբ, յայտարարուած է յեղափոխականօրէն կասկածելի և դուրս՝ օրէնքի հովանուց։

Բանտ, խուզարկութիւն ու աքսոր — յաճախ եղած են այն վայրերում, ուր տիրական է Սլավ բռնապետութեան Գայիսօնը. սակայն այն՝ ինչ կատարուում է վերջին տարիները, նոյնիսկ ցարի Հոկտեմբերեան Մանիֆեստից յետոյ, — պաշտօնական յայտարարումը սահմանադրութեան —, — բացառիկ է և նորատիպ։

Ի՞նչ դառն հեգնանք։

Մինչ Պետերբուրգ, ռուսական դումայի մէջ արժանաւոր ու անարժան բերաններից ճառեր են հոսում՝ յանուն քաղաքական ազատութեան և ապահովութեան, ծայրագաւառներում՝ Լեհաստան, Ֆինլանդիա և Կովկաս, լեզուները կաշկանդուում են ոստիկանական հրամաններով, գրիչները կոտրուում են գրաքննարանների մէջ, և բոլոր լաւ քաղաքացիները՝ բժիշկ, փաստաբան, գրող, ուսուցիչ, պաշտօնեայ, երկրագործ, վարժուհի՝ գնում են բանտերը — քաղաքական Գե-

Generated on 2018-06-08 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ընդմանոցները, քաւելու մեղքեր, որ չունեն, կրելու տանջանք, որին արժանի չեն...։

Ու նստած Փակ Դռների ետևը, հարիւրաւոր կալանաւորներ, երեք տարուց իվեր ենթակայ անպատում զրկանքների տնքում են ու մտածում՝

— Ի՞նչ է մեր մեղքը.

Եւ ռուսական դատարանի անարժան պաշտօնեան՝ Լրիժին անուանած, որ գերազանցապէս ոստիկանական ոգի է, քան դատաստանական, որի ամբողջ թելադրանքը գալիս է ներքին գործերի մինիստրից, բայց երբէք Օրէնսգրքից պատասխանում է անարդարար.

— Ձեր մեղքը այն է, որ հայ էք։ Դուք պատասխանատու էք այն բոլորի համար, ինչ անցնում է հայ կեանքի մէջ։ Մեզ հարկաւոր է մոխրի տակ թաղել բորբոքուող կրակը, արմատից պոկել յեղափոխութեան ծիլերը, քանդել քաղաքական կուսակցութիւնները, գերեզմանել այն բոլորը, ինչ կենդանի է և կենսունակ։ Փա՞ստ կուզէք. փաստը մեր քմահաճոյքն է. վաւերագի՞ր կուզէք.— վաւերագիրը ոստիկանական զեկուցագիրն է։ Ո՛չ մի քաղաքական կուսակցութիւն, ոչ մի հայկական միտք, ոչ մի շարժում— ահա մեր կամքը։ Ձեր կամքը դեռ չէ թագաւորում— ահա ձեր մեղքը...»։

Ու Ստոլիպին, նախագահ անսահմանադիր մինիստրութեան, ոստիկան, բայց ոչ պետական մարդ, գաղտնի ժանդարմ, բայց ոչ օրէնքի սպասաւոր, հրահանգում է թղթով ու խօսքով՝

— Ճզմեցէ՛ք, հարւածեցէ՛ք։

Ու ճզմում են։

Ու հարւածում են.....

Generated on 2018-06-08 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Գիշեր է։

Սոսկումի ենթակայ «հպատակները», հարուստ թէ աղքատ, հենց որ աղօտ լապտերները սկսում են վառվել ոստիկանապատ փողոցներում, փախչում են դէպի տուն, ինչպէս վերահաս մրրկից խուսափող թռչուններ։ 1906-ից իվեր, երբ ամբողջ Ռուսաստանում կազմակերպուեց «Սեւ Գրքոյը», հարկաւ ոչ թէ յեղափոխութեան, այլ ոստիկանութեան ջանքերով, երբ ինքը ոճրամիտ կառավարութիւնը զինեց մութ տարրերը, տականքը ամբոխի, արթնացող Երկրի վերայ սարսափի քօղը ծածկելու համար, — այլևս երեկոները ոչ ոք ապահով չէ դուրսը։ Ամէնքն էլ տուն են վազում, փակուելու կրկնակուղպէք դռների և վանդակաւոր պատուհանների յետևը։

Քաղաքական անապահովութեան նշանակն է այդ։

Զանգը հնչեց։

Զարզանդ է անցնում ներսը, տնեցիների մարմնով։ Ո՛ւշ ատեն զանգ — դժբաղդութեան նշան է այդ։ Եւ իրօք։ — «Բաց արէք», կանչում են ժանդարմները դրսից, հրամայօրէն, ըստ պառնական։

Դռները բացվում են և ներս է խուժում ամբողջ մի զօրակոյտ,—15-20 հոգի, ոստիկաններ, ժանդարմների գլխաւորը՝ օգնականներով, դատախազի ներկայացուցիչը, լրտեսներ այլևայլ համազգեստներով, քանի մի «վկաներ», հաւաքած փողոցից, հարբած և անպատկառ — վաւերացնելու թղթեր, որ գոյութիւն չունեն, ստորագրելու արձանագրութիւն, որը կարդալ չը գի-

Generated on 2018-06-08 12:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

տեն։ Ոստիկանական օրէնքի ձեռակերտած «պօն-
եատոյ»ն է, այնքա՞ն ծանօթ բանտարկութեան
Հայրենիքի մէջ։

Հրամանը տրուում է։ Ահա դռները փակվե-
ցին, պատուհանների մօտ մարդիկ տնկուեցան,
տանտէրը դրուեց հսկողութեան տակ, և սկսուեց
խուզարկութիւնը,— բոլոր սենեակներում և ան-
կիւններում, խոհանոցից մինչև ննջարանը, ծա-
ռայի խուցից մինչև տանտիկնոջ առանձնարանը։

— Կինս անկողնու մէջ է, թոյլ տէ՛ք, որ
հագնվի, և ապա ներս մտէք, նկատում է տան-
տէրը, խնդրաբար։

— Ժամանակ չունենք, գոռում է հեգնօրէն
ոստիկանը, և խուզարկուները ներս են խուժում
ահաբեկ տանտիկնոջ ննջասենեակը, լրբենի հե-
տաքրքրութեամբ ու աչքանշաններով։

Ահա և բուն գործողութիւնը։

Հանդէս են գալիս ահագին քլունգներ, և ոս-
տիկանի զգեստ հագած հարբեցողները, խեղճ
զոհերը անբարոյականացնող պաշտօնէութեան,
սկսում են աւերման գործը։ Քլունգները սլա-
նում են դէպի առաստաղը, դէպի պահարան-
ներն ու դռները, դէպի յատակի այն մասերը,
ուր փոքր ինչ խորտուբորտութիւն կայ։ Երևա-
կայական կասկածի ներքև՝ փշրում են դռները,
տեղահան են անում յատակի տախտակները,
ճեղքեր են բանում առաստաղի մէջ, քանդում
են պատը, ծածկում են մահճակալը, բաց են
անում խոհանոցի պահարանները, գրքերի դա-
րանները, սեղանը, գզրոցները, կեղտոտ մատ-
ներով քրքրում են կանանց հագուստներն ու ըս-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պիտակեղէնը, առանց մոռանալու, հարկաւ, երկդիմի սրախօսութիւնները...։

Ու ամբողջ գիշերը այդ «օրինական» աւերմունքը կատարելուց յետոյ, առաւօտեան դէմ հպարտու յոգնուած՝ դադար են առնում, հաւաքում ու ահագին կապոցներ շինած տանում են գրքերը, Աստուածաշունչից մինչև «Կերակուր Եփելու Արհեստը», երեխաների տետրակները, բոլոր թղթերը, եթէ վրան նոյնիսկ մի տառ չի գրած, բոլոր նամակները, առանց բացառելու սիրահարականները, ո՛ւէ նորաձև դանակ, կասկածելի «մեքենաներ», նոյնիսկ քաղցրաւէնիք եփողը, հետն էլ միասին՝ ամենավտանգաւոր քաղաքական իրը—տանտէրը, որ աչքերը գձած փոքրիկ զաւակների արտասուաթոր աչքերին՝ մրմնջում է.

— Սրտոտ եղէ՛ք, շուտով կը գամ...։

Եւ յետևից աւերակ, սուգ, արտասուք։

Դա խուզարկութիւնն է...։

Փողոցի մէջն են։

Կալանաւորը չրջապատուած զինուորներով՝ սառցադէմ և սպառնական, չը գիտէ թէ ուր է գնում և ինչու համար։

— Ու՞ր էք տանում, հարցնում է նա։

— Քանի մի բոպէով ոստիկանապետի մօտ, պատասխանում են ապահովութեան ներկայացուցիչները, անվրդով և հանգիստ։

Եւ տանում են ոստիկանապետի մօտ, այն տեղից փակ կառքով դէպի անծանօթ պաշտօնա-

Generated on 2018-06-08 12:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ման։ Ամէն ինչ անծանօթ է և անորոշ։ Սուերի նման շարժվում է «քաղաքացին», առանց դիմադրութեան, անխօս և վախը սրտին մէջ։

Ահա՛ մի պաշտօնատուն։ Ի՞նչ տեսարան — արդէն շատ կալանաւորներ, երբեմն միմիանց ծանօթ, երբեմն անծանօթ սպասում են կարգադրութեան, հրահանգների... Դռները բացվում են և գալիս է հրամանը։ Սկսվում է նոր խուզարկութիւն — անձնական, կալանաւորի անձի վրայ, գրպանների մէջ, կօշիկի կրունկների շուրջը, գլխարկի բոլոր ծալքերում, և նոյնիսկ մօրուքի մէջ...

Վերջացաւ «անձնական» խուզարկութիւնը ևս։ Այժմ պէտք է տանեն։ Բայց ո՛ւր, ո՛ր քաղաքը, ո՛ր բանտը — այդ յայտնի է միմիայն ոստիկանութեան։

Սկսւում է ելէը։ — Տարբեր է ելէը՝ տարբեր մարդոց համար։ Երբեմն ժողովրդի վրայ սարսափ գձելու նպատակով, կալանաւորները տանում են խումբով, քաղաքի գլխաւոր փողոցներով, շրջապատված կօզակներով հեծեալ, և գինուորներով՝ սուինաքարդ։ Աչ և ձախ ամբոխը յետ է նահանջում։ Ո՞վ կը համարձակվի մօտենալ կամ մօտ կանգնել։ Ամենակարող սուինը պատրաստ է խրվելու այդպիսի յանդուգնի մէջքի կամ ազդրի մէջ։ Ցաճախ տանում են գիշերով, գաղտնի ծնողներից ու բարեկամներից, փակ կառքով, յետ ընկած փողոցով։ Ոչ ոք գիտէ, թէ ուր տարան, ինչպէս տարան, ում հետ տարան։ Անցնում է մի շաբաթ, երկու շաբաթ, բարեկամները կամ տնեցիները մաշում են ոստիկանապետի դիւանի դռները, մեծերի շէմքերը,

Generated on 2018-06-08 12:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

որ մի լուր առնեն, մի բան իմանան, — արդեօք կալանաւորը մեռած է թէ կենդանի։

Ամէն շրթունքներից նոյն պատասխանը՝ «Ցայտնի չէ··»

Եւ դարձեալ յաճախ՝ տանում են կալանաւորները խմբովին, կայարանից կայարան, բանտից բանտ, նոյնիսկ քաղաքից քաղաք, ոտնաբոպիկ, անձրեւի ու ձիւնի տակ, ենթակայ ծանր վիրաւորանքի։

Մի օր, Թիֆլիսի ցեխոտ մի փողոցով տանում էին երկու կալանաւոր։ Մէկը երիտասարդ — մի հայ գրող, միւսը սպիտակահեր ծերունի — մի հարուստ կալուածատէր։ Օդը անձրեւային էր, ցուրտ, խոնաւ։ Ճամբան երկար էր և ծանր։ Ծերունին անվարժ և ուժասպառ, երերում էր, անկարող քալելու։

Երիտասարդ կալանաւորը հայեց իր վիճակակից ալեզարդ կալանաւորին, զգաց՝ որ նրա ոտները այլևս ուժ չունեն, մօտ է մարելու, դիմեց գինուորներին այս աղերսանքով.

— Եղբայրներ, ես կը քալեմ ոտով, դեռ ոյժ ունեմ, բայց խղճացէք այս ծերունուն, թոյլ տուէք որ կառք նստի, ուժասպառ է, նա էլ մարդ է··· Խղճացէք նրա ծերութեան։

— Քալէ՛, շուն, մռնչաց գինուորը, հրացանի խոնտախը բարձրացնելով, քալէ, և լեզուդ քեզ պահէ···

Ու քալեցին·····

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ահա և բանը։

Ծգոստափառ հանդարտութեամբ բացվում է նշանաւոր դ ա ր պ ա ս ը, իր անխուսափելի և յաւիտենական պահապանի ձեռքով, և մի վայրկեան յետոյ՝ «կենդանի մեռածների» աշխարհի մէջ աւելանում է մի նորը... Այդ րոպէից նա այլ և ս քաղաքացի չէ, մարդ չէ, այլ մի համոզ, պիտի շարժվի, երբ կը հրամայեն, պիտի ելնէ երբ կը պատուիրեն, արտօնված միայն մի իրաւունքով։ Շրջակայ երկաթապատ պատուհաններից— որոնք ներքին բակի վրայ են նայում— հարիւրաւոր աչքեր են դիտում նորեկը. աչքեր քաղաքական հերոսի, որ ազատութեան համար կուրծք տուեց, աչքեր ոճրագործի, որ գուցէ մօրն է մորթել, աչքեր աւազակի, հրձիգի և արբեցողի, — որովհետև այդ «աշխարհի» մէջ ամէն ինչ կայ և ամէն ինչ խառն է, մեծութիւն և տականք, զոհողներ և զոհվողներ...

Արձանագրեցին անունը, տարան ներսերը...

Նա արդէն փակ դռների յետևն է։ Պէտք է նստի ու սպասէ։ Արդեօք հաց ունի, շոր ունի, գլուխ դնելու տեղ ունի, արդեօք քննում են նրա յանցանքը. տանջանքի է ենթակայ թէ հարց ու փորձի, մեռած է թէ կենդանի —ոչ ոք գիտէ։

Դռները փակ են։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կովկասեան հայերի «քաղաքական» բանտարութիւնը 50 տարվան պատմութիւն ունի արդէն։

Առաջին քաղաքական կարևոր բանտարկեալը եղաւ հայ ականաւոր հրապարակագրող-բանաստեղծ Միքայել Նալբանտեան, 1864 թ-ին։ Նրա յանցանքը այն էր, որ շարադրեց մի քանի հոգեշունչ ոտանաւորներ, նուիրած ազատութեան և ժողովրդի վերածնութեան, և Լօնդօն գնացած՝ ծանօթացաւ քաղաքական նշանաւոր ռուս գործիչ Գերցենի հետ։ Բանտի դժոխային պայմանների տակ՝ հայ գրողը թոքախտ ստացաւ, և երբ տեսան, թէ մահը անխուսափելի է — տենչահնքը ոստիկանի — նրան արձակեցին, որպէսզի բանտի մէջ «ապրելուց» յետոյ՝ «ազատութեան» մէջ մեռնի։

Եւ քանի մի ամսից՝ Նալբանտեան մեռաւ, հաւատարիմ իր նշանաւոր խօսքերին.

«Ես մինչ ի մահ, կախաղան,
«Մինչև անարգ մահու սիւն՝
«Պիտի գոռամ, պիտի կրկնեմ՝
«Անդադար Ազատութի՛ւն։

Անցաւ մօտ 15 տարի, քիչ շատ խաղաղ։

Թիւրքիայից, սահմանի միւս կողմից, հասնում էին Կովկասի հայութեան ականջին, Եղեռնի սարսռիչ լուրեր։ Համիտեան անարգ բէժիմի

ներքոյ հիւծող հայ ժողովրդի ճիչը և արեան հոտը, հակառակ շղթաների և խստութեան, հասնում էին մինչև Արարատեան դաշտը։ Այդ միջոցին էր, 1877ին, որ Ալեքսանդր II պատերազմ յայտարարեց Թիւրքիային, յանուն Արևելքի Քրիստոնէութեան։ Սակայն այդ պատերազմը չարդարացրեց Փոքր-Ասիական Քրիստոնէութեան յոյսերը, և երբ Ռուսական զօրքերը, Բերլինի կոնգրէսից յետոյ, յետ քաշուեցին Օսմանեան Երկրից, Համիտ խորհեց և որոշեց՝ վրէժը լուծել քրիստոնեայ հայերից։ Եաթաղանը փայլեց։ Հայաստանը դարձաւ սուգի և արեան ծով...

Այդ քաղաքական արիւնոտ տագնապը ցնցեց և մորմոքեց Կովկասի հայութիւնը։ Դրդված եղբայրական պարտքի տարրական զգացմունքից, Կովկասից սկսեցին ուղարկել՝ դրամ՝ աւերվածների համար, զէնք՝ անպաշտպանների համար, մարդիկ՝ աջակցութեան համար։ Սակայն ցարի կառավարութիւնը, որ պատերազմ յայտարարեց, յանուն քրիստոնէութեան, պատերազմից յետոյ, յանկարծակի այլակերպման ենթակայ, փոխեց իր դիրքը, վերաբերմունքը, լեզուն, և ծառացաւ իբրև թշնամի «քրիստոնեայ» Թիւրքահայերին օգնելու ամէն մի փորձի։ Նա ոչ միայն չօգնեց հալածական ժողովրդին՝ սոսկումի և ջարդի սեւ օրերին, այլ և սկսեց հարուածել այն Կովկասահայերին, որոնք օգնութեան ձեռք էին ուղում կարկառել, տանջուող արիւնակիցներին...

1884-ին տրվեց հարուածը։

Երևանի մէջ, ի մեծ զարմանք ամբողջ քա-

Generated on 2018-06-08 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

զաքի, կատարվեցին ֆիզիկական խուզարկութիւններ։ Արևելքի ննջուն այդ քաղաքը տակնուվրայ եղաւ։ Մի քանի շաբաթ շարունակ, գիշերները մանաւանդ, շատ քաղաքացիների բնակարանները դարձան ահաբեկման վայրեր։ Հարուածվեցան հայ բնակիչների բոլոր խաւերը և կալանքի ենթարկուեցան փաստաբաններ, պաշտօնեայ, կին, բժիշկ, վաճառական։ Բանտերի մէջ շատերի «մեղքերը քաւել տալուց» յետոյ՝ աւելի քան 20 հոգի աքսորվեցին Ռուսաստանի հեռաւոր քաղաքները, և նրանցից ոմանք աքսորի մէջ էլ մեռան, առանց հայրենիքը վերատեսնելու բաղդին (1).....

Դա առաջին խմբական կալանաւորումն էր։

Դրա միւս գործողութիւնը կատարվեց Թիֆլիս։ «Քաղաքական կապ» գտնելով Երևանի և Թիֆլիսի հայերի մէջ, Թիւրքահայերին աջակցելու «յանցաւոր» գործում, 1884-ին ոստիկանութիւնը և ժանդարմական իշխանութիւնը միացած՝ խստագոյն խուզարկութիւն կատարեցին բնակարանում Գրիգոր Արծրունու, ականաւոր հայ հրապարակագիր և հիմնադիր «Մշակ» լրագրի։ Խուզարկութիւնը տևեց երեք օր։ Կնքեցին և տարան բոլոր թղթերը։ Նոյն վիճակին ենթարկուեց և Ռաֆֆին, նշանաւոր հայ վիպագրողը, անդամը «Մշակ»ի խմբագրութեան։ Խելա-

---

(1) Աքսորվածների Թւում էին՝ Վարդանեան, Նոտար, Եղիազարեան, Փոստաբան, Տիկին Մատակեան, Գեղեցիկ օրիորդաց գպրոցի, Մատակեան, Պոլսոնեաց, Տէր-Զաքարեան, Պոլսոնեաց, Մհերեան, Գոլոնոտար, Զալալեան, Էրոստաբան, Տիգրանեան, Բեթլի և այլն։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կորոյս ոստիկանութիւնը (Բաֆֆիի վէպերի ձեռագիրները գրաւեց, իբրև «կարևոր ապացոյցներ» նրա քաղաքական վտանգաւորութեան...։

Սպառնական նշան էր այդ։

Երկու ականաւոր ու վերին աստիճանի ժողովրդական հայ գրողների խուզարկումից յետոյ՝ ոստիկանութիւնը սանձարձակ ձեռք առաւ գաւառական քաղաքները, և այդ թւականից սկսած ապահովութեան պաշտօնեաները՝ Անդրկովկասի մէջ ստանձնեցին մի նոր ֆունկսիոն—խուզարկութեան պաշտօնը, որ եղաւ յարաճուն երկիւղի մշտական պատճառ նահապետական ազգաբնակութեան մէջ։

1890-ին խստութիւնը տասնապատկվեց։

Երբ Հայաստանից Կովկաս հասնող լուրերը դարձան ծայրայեղօրէն ահարկու և խեղդիչ, մի խումբ երիտասարդ հայեր, ուսանողներ, ուսուցիչներ, արհեստաւոր և գիւղացի, դրդված անմիջական օգնութեան զգացմունքից, խումբ կազմեցին, գինուեցին, որպէսզի սահմանը անցնեն, մտնեն Թուրքաց Հայաստան, և պաշտպանեն խաղաղ ժողովուրդը՝ Քրդերի և Համիդական սպանիչների դէմ։ Սակայն դեռ սահմանը չանցած, շրջապատվեցին ռուսական սահմանապահ գինուորների կողմից, ձերբակալուեցին բոլորն էլ, մօտ 50 հոգի։ Նրանց շղթայի զարկեցին ու նետեցին բանտը՝ խստագոյն պայմանների մէջ։ Ապա դատի ենթարկեցին, իբրև «քաղաքական ագիտատորներ՝ հայկական ազատութեան հետապնդողներ»։ Այդ փաղանգը յայտնի է «Կուկունեանի

Generated on 2018-06-08 12:16 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015057757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Ցումբ» անունով, որ անունն էր իր շէֆի, նախկին ուսանող Պետերբուրգի համալսարանի։ Բանտարկվածներից ոմանք մեռան բանտի մէջ, դեռ դատավարութիւնը չաւարտած՝ մնացածներն էլ անմեղօրէն դատապարտվեցին փոխանակէր աշխատանքների Սիբիրի մէջ, 20 տարի՛ ժամանակով։ Մի մասը այդ անբաղդ երիտասարդների՝ մեռան դեռ Սիբիր չը հասած, միւսները քշուեցին այդ սոսկաբեր Երկիրը, մաղարաների և շղթայի մէջ քաւելու իրանց ծանր յանցանքը -- ղոհաքեչել անչը եղբօր համար.....

....Աստիճան առ աստիճան ոստիկանութեան հալածանքը խստացաւ ո՛չ միայն «կենդանի եղբօրը» օգնողների դէմ, այլ և նրանց դէմ, որոնք ուզում էին.. «մեռած եղբօրը» արժանաւորապէս թաղել։ Թաղումն էլ դարձաւ քաղաքական յանցանք։

Դրա փաստը ունեցանք 1892-ին։

Մեռաւ Գրիգոր Արծրունին։ Սգաւոր Կովկասի հայութիւնը, ցնցւած ու տխրասիրտ, ուզեց վերջին յարգանք մատուցանել ամենաժողովրդական հայ գործիչին։ Սկսւեց անսովոր շարժում՝ թաղման համար, — հայ աշխարհի բոլոր կողմերից պատգամաւորներ և պատգամաւորութիւններ 480 պսակ։ Հազարաւոր հեռագիրներ։ Հոգեհանգիստներ և վիշտ ամենուրեք։

Դեկտեմբերի 27-ին էր։ Թիֆլիսի Գոլովինսկի պողոտան մարդկային ծով էր ներկայացնում։ Դագաղի յետևից քայլում էին 60 հազար մարդ, տխուր և սրտաբեկ։ Համաժողովրդական սուգը՝ ստացել էր համաժողովրդական յարգանքի պատ-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կեր։ Դագաղի շուրջը ծովացած բազմութիւնը՝ լուռ էր, ինքնամփոփ և յարգալից...։ Ու յանկարծ ճամբի կէսին ծառացաւ ոստիկանութիւնը, ճիաւոր և հետևակ։ «Ետ գնացէք, այս փողոցով չէ կարելի, պէտք է անցնել միւս փողոցը»։ Ծովանման ժողովուրդը չէր կարողանում հասկանալ էութիւնը։ Ինչո՞ւ այլ փողոցով, և ոչ թէ քաղաքի գլխաւոր փողոցով, որի վրայ գըտնւում էր Արծրունու տոհմական մեծ չէնքը, ուր կրօնական ըմբռնումով, ուզում էին «աղօթք» արտասանել։ Խնդրեցին, բացատրեցին, սակայն ոստիկանութիւնը մնաց անյողդողդ։ Համբերատար ժողովուրդը գրոհ տուեց, զինուորները սուր հանեցին։ Արարողապետը, հայ եպիսկոպոսը, մարեց այդ անակնկալից...։ Սակայն միակամ ժողովուրդը ճեղքեց չղթան և անցաւ իր ճամբան։ Հանդէսը հասաւ, առանց ո՛ևէ դէպքի, գերեզմանատուն, և մեծ գործողի դիակը յանձնուեց հողին...։

Սակայն, թարմ գերեզմանի առջև անգամ յարգալից լինելու զգացմունքն չունեցաւ բռնաւոր կառավարութիւնը և նոյն օրն իսկ, գիշերուան ժամին, քաղաքի մէջ ծայր տուեց խուզարկութիւնն ու բանտարկութիւնը։ Սուգին աւելացաւ՝ սոսկումը։ Խուզարկութիւն՝ բոլոր թաղերում։ Պատգամաւորներից շատերը անմիջապէս մեկնեցին քաղաքից — բանտ չգնալու համար։ Եւ գիշերուան ուշ ժամին տասնեակներով մարդիկ — գրողներ, պրոֆէսոր, պաշտօնեայ, խըմբագիր, նկարիչ, մասնագէտներ — քշուեցին բանտերը, իբրև հակակառավարական ցոյցի հեղինակներ և վտանգաւոր ագիտատորներ.....

Անհաւատալի է, բայց փաստ է։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ահա և 1895 թուականը,

Որ եղաւ բանտերի և խստութիւնների նոր շրջան։ Նորից Հայաստանից հնչող լուրերը մութ կերպարանք առան։ Յեղափոխական հատուածների և Եւրոպական ճնշման ազդեցութեան ներքոյ, Ելտըզի Ներոնը համաձայնութիւն տուեց «Մայիսեան Ծրագիր» կոչուած հայկական ռէֆորմներին, բայց ճիշդ այն պահուն, երբ ոճրագործ գահակալի գործակալները, Շաքիր Փաշայի ղեկավարութեամբ Հայաստան գնացին «բարեՆորոգումների ծրագիրը» գործադրելու, երբ Անգլիական նախարարութեան խոստումներից ոգեւորուած, Էրզրումի Հայոց Եպիսկոպոսը վարդանման խոսքերով աւետում էր «ազատութեան ծնունդը ըստրուկ Հայաստանի մէջ», նոյն միջոցին հնչեց ընդհանուր ջարդի ահազանգը։ Սուլթան Համիդ այդ օրերին եղաւ անսանձ, աւելի քան երբ և իցէ։ Նա իր արիւնոտ ձեռքերի մէջ ունէր անուղղակի աջակցութիւնն ու համաձայնութիւնը ցարի արտաքին գործերի նախարարի, Լոբանով-Ռոստովսքի, որը ուզում էր «Հայաստան առանց հայերի»։ Եաթաղանը բարձրացաւ անննախընթաց կատաղութեամբ...։ Ու երբ հայկական ջարդի սոսկումներից աշխարհ սասանեց և երկինք անգամ կարմրեց, ցարական կառավարութիւնը չտապեց փակել սահմանագլուխը, լռութիւն տարածել ամբողջ մամուլի և Կովկասի վրայ, որպէսզի սահմանի միւս կողմը խողխողուող ժողովրդի մահատագնապի աղաղակը չը հասնի Կովկասեան հայութեան ականջին, և օգնութեան ու բողոքի փորձեր չը լինին...։ Խստութիւնը սանձարձակ էր։ Ինչ յետոյ՝ հայոց մամուլը իրաւունք չունէր ո՛չ միայն բողոքելու ոճիրի դէմ,

Generated on 2018-06-08 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

այլ նոյնիսկ տալու «Հայաստան» կամ «Թիւրքաց Հայաստան» բառերը։ Հսկայական պատ քաշվեց արիւնակից ժողովրդի մէկ և միւս մասի մէջ։ Ոչ մի հանգանակութիւն։ Ոչ մի զէնք։ Ոչ մի կարեկցական շարժում։ Դրա փոխարէն խմբական և առանձնակի բանտարկութիւններ, Թիֆլիս, Բագու, Երեւան, Շուշի, Գանձակ քաղաքներում։ Քաղաքներից յետոյ և գիւղերի մէջ — որպէսզի բանտային փականքի տակ լուութեան մատնեն յեղափոխական և ըմբոստ բողոքողները։ Դիրք և ազդեցութիւն ունեցող հայ գործողների մեծագոյն մասը կալանաւորութեան ենթարկվեցին, աւելի քան 100 հոգի։ Շատերը աքսորվեցան ռուսական ներքին գաւառները։ Միւսները հնար ունեցան արտասահման ապաւինելու։ — Եւ դա եղաւ հալածանքի ու բռնութեան սեւ թւականներից մէկը, Կովկասի քաղաքական ժամանակագրութեան մէջ։ (1)

Այդպէս տեւեց մինչեւ 1896 թւականի վերջերը, երբ Պետերբուրգեան բռնապետութիւնը հրճուանքով և յաղթանակօրէն համոզվեց, թէ վիրաւոր հայութեան վէրքը այնքան խորն է և մահացու, որ նա այլեւս անկարող է վերապրել։ «Այո՛, ասում էր մի օր Ամերիկացի մի միսիոներ, երկար ժամանակ վանում ապրող, երբ տեսանք բլրացած դիակները և ծով արիւնը՝ այդ անպատում սոսկումն ու խելագար փախը, ասացինք,

(1) Կալանաւորները պատկանում էին հետեւեալ խմբերին՝ մանկավարժներ 22, գրողներ 7, ուսանողներ 10, պետական պաշտօնեաներ 8, գործակատարներ 20, հոգեւորականներ 4, արհեստաւոր 21, վաճառական 8, ազատ պրոֆեսիոն 12։

Generated on 2018-06-08 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

— այլևս չը կայ Հայաստան, չը մնաց հայ ժողովուրդ ...»։

1895-96ը գերեզմանն էր հայութեան։ Եւ գերեզմանափորերի մէջ՝ «ցարական քլունգը» առաջին տեղը բռնեց։

Որպիսի՛ սեւ պատիւ։

Generated on 2018-06-08 12:09 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

1908-Ի ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԸ

Նոր օրերը՝ հիները մոռցնել տուին։ 1908ից հիմնաւորուած «քաղաքականութեան» հանդէպ նախկին բանտարկութիւնները իրօք նսեմացան։ Խմբական, տեւական և համատարած կալանաւորումները, որոնց շրջանը բացվեց 1907–1908 թուականներից, եզական են Կովկասեան հայերի գուցէ եւ ռուսական տարեգրութեան մէջ։ Ռուսների, Լէհերի, Հրեաների, Ֆիններեի շրջանում շատ աւելի մեծ եւ բռնաշունչ բանտարկութիւններ եղան, բանտարկութիւններ վիթխարի և ապշեցուցիչ, բայց երբէք չէր տեսնուած, նոյնիսկ ցարական թագաւորութեան մէջ, որ մի ամբողջ ազգ, մի ամբողջ ժողովուրդ, իր բոլոր խաւերով, միմիանց հակադիր եւ յաճախ միմիանց դէմ պայքարող, դառնար ոստիկանական եւ կասկածելի, եւ մեղադրուողների նստարանի վրայ բազմեցնէին ո՛չ թէ մի դասակարգ, մի շրջան, մի կուսակցութիւն, այլ մի ամբողջ ժողովուրդ։

Եւ իրօք։ 1908-ից ծայր տուած կալանաւորումները ազատ չը ձգեցին եւ ոչ մի շրջանը հայ ժողովրդի։ Խուզարկութեան ենթարկվեց ե՛ւ քաղաքական կուսակցութեան անդամը, եւ հայոց կաթողիկոսի ապարանքը, ներկայացուցիչը մի ամբողջ եկեղեցու, եւ՛ գրողը, որ քարոզում է նոր կեանք եւ նոր միտք, եւ ամենատգէտ գիւղացին, որ նոյնիսկ կարդալ չը գիտէ, և միլիոնատէրը, որ վայելում է, և բանուորը, որ տան-

Generated on 2018-06-08 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ջրուում է, և վաճառականը, որ խանութից դուրս աշխարհ չէ ճանաչում, և պրոֆէսորը, որի գործելավայրը միայն դասարանն է, և կղերականը որ գահերի հաստատութեան ջերմ աղօթարարն է, և ուսանողը, որ դրօշակակիրն է յեղափոխութեան, և բժիշկն ու փաստաբանը, որ ազատ պրոֆէսիօնի մարդիկ են, և գաւառապետն ու պաշտօնեան, որ կառավարութեան սպասաւորներն են, եւ կին և մարդ, հարուստ և աղքատ, և տեղացի և եկուոր, քաղաքացի և գիւղացի—մի խօսքով Անդրկովկասը՝ մի ծայրից միւսը, և այնտեղ բնակող հայութիւնը, մի խաւից մինչեւ միւսը...։

Դա է բնորոշող գիծը «յ» նոր «արկած»ի մէջ։

Առաջին նշանը տուեց 1908 Դեկտեմբերին, Թիֆլիսում, և 1909-ի սկզբին հասաւ իր խստագոյն աստիճանին։ Խուզարկումների թիւը քանի մի հազարից անցան։ Կալանաւորուեցան աւելի քան 500 հոգի, և փակվեցան այլևայլ բանտերի մէջ, Կովկաս թէ՛ Կովկասի սահմաններից դուրս։

Բանտարկվածների մէջ կային, ի միջի այլոց՝ գրողներ 8, բժիշկներ, փաստաբաններ եւ այլ մասնագէտներ 22, պրոֆէսորներ և դասատուներ 24, պաշտօնեաներ և ծառայողներ 30, վաճառականներ 45, արհեստաւորներ 70, մեծ թիւով գիւղացիներ և բանուորներ, ինչպէս նաև հոգեւորականներ, կանայք և նոյն իսկ աշակերտներ...։

Կասկածի տակ դրվեցան աւելի քան 3000 հոգի, և եթէ կասկածի տակ դրված ու խուզար-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կութեան ցուցակների մէջ մտցած շատ անձինք կը շտապէին խուսափել այդ խելագար հալածանքից — Ռուսաստանի մէջ պաշտօնեաներ կաշառքով գաղտնիքներ ծախելու մեծ վարժութիւն ունին — ապաստանելով ո՛չ միայն Եւրոպա, այլև Երեւակայեցէք, երեկեան բռնավայրերը, Թիւրքիա և Պարսկաստան, անկասկածօրէն Կովկասեան մեծաթիւ բանտերը իրանց հարիւրաւոր խըցերով իսկ տեղ չը պիտի ունենային պարփակելու այդ հազարաւոր «հիւրերը»։

Ձերբակալումների քանակը չէր միայն՝ որ վրդովիչ էր, այլև խուզարկումների որակը։ Իրաւական և օրինական տեսակէտից — այդ ամբողջ գործը ախտաւոր է, և նոյնիսկ չինծու հիմքերի վրայ դրած։

Ինչո՞ւ։ Այն պարզ պատճառով, որ ձերբակալութիւնները հետեւանք չեն օրինական կերպով պատճառաբանված խուզարկութեան և ոստանելի ապացոյցների, այլ թէ՛ խուզարկութիւնները և թէ՛ կալանաւորումները նախօրօք որոշված և թելադրված են, կեդրոնական կառավարութեան կողմից, փաշ-փաշան տեսակէտներով։

Երբ Պետերբուրգի մէջ, կեդրոնական կառավարութիւնը որոշեց քաղաքական որոշ նպատակով, հալածանք սկսել Կովկասի հայութեան դէմ, դրանից միաժամանակ հրահանգ ուղարկվեց Կովկաս՝ — ոչնչացնել հայկական գաղափարը, և սկսել հարուածը։ Կովկասում, ինչպէս ամէն տեղ, դեռ հպարտօրէն գոյութիւն ունի Նապոլէոնի ոստիկան-մինիստրի տիպը, որ «միշտ գըբ-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:08 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պանում որեւէ դաւադրութեան ծրագիր կը պահէ»։ Եւ ահա այդ մշտապատրաստ գործակալները, ոստիկան, սպայ, թէ դատախազ, որ շատ լաւ են հասկանում կեդրոնական կառավարութեան տուած նշանները, ինչպէս և քաջ կը ճանաչեն միմիանց, մեկտեղ եկան, ծրագրեցին և սկսեցին։ Երկու ամիս, երկու տարի առաջ միանգամայն խաղաղ, լոյալ, օրինապահ ճանաչված ժողովուրդը յայտարարվեց իբրև հակապետական, յեղափոխամիտ և հայկական անկախութեան ձգտող,— և հարուածը տեղից ալ ու ձախ։

Խուզարկութիւնների սարսռիչ «պատկերը» արդէն վերը տեսանք։ Բաւական չէր, սակայն, խուզարկել և սարսափ գՀել, պէտք էր կառավարական պատիւը գէթ արտաքուստ փրկելու համար, քանի մի «հաստատիչ փաստեր»։ Եւ ինքը դատարանական քննիչը, լիազօր և ամենակարող, ձևակերպում, կարգաւորում է այդ փաստերը, և յանձնում լրտես-գործակալներին, իրականացնելու հրամանով։

Քանի մի օրինակ։

Երեւանում սկսված էին խուզարկութիւններ։ Զարագուշակ մի գիշեր շրջապատում են տներից մին, և ներս խուժում։ Տանտէրը՝ անմեղ և անտեղեակ մի մարդ, ափշեց և ասաց. «բայց ի՞նչ է իմ մեղքը»։ Եւ ահա տան ներքնայարկի մէջ՝ ոստիկանը գտաւ մի շատ վտանգաւոր թռուցիկ, իբրեւ մեղադրութեան շառաչելից փաստ։ Շատ ու շատ դառն օրերից յետոյ միայն պարզվեց, որ «այդ վտանգաւոր թռուցիկը» նետված էր տան մէջ՝ ոստիկանապետի կարգադրութեամբ...։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:07 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մի օր, Թիֆլիսի մէջ՝ գիշերվան պահուն, ոստիկանութիւնը մտաւ համեստ մի գործակատարի բնակարանը, Գալստեան անունով, դուրս քաշեց նրան անկողնից և սկսեց մանրազնին խուզարկութիւն։ Գտնդեցին, տակնուվրայ արեցին ամէն ինչ։ Ոչինչ գտան՝ կասկածելի։ Ժանտարմական սպայի հրամանով խեղճ կասկածեալը «կնուտի» տակ առան, և սկսեցին գաղանային ծեծ։ Ո՞ւր է արկղը, ցոյց տուր, «ո՞ւր թագցրիր, կրկնում՝ էին կնուտի հերոսները։ — «Ի՞նչ արկղ — մրմնջում էր կապտած անմեղը, խնայեցէք ինձ, ես արկղ չեմ տեսել»։ Շաբաթներ յետոյ յայտնվեց՝ մի ոճրային թիւրիմացութիւն։ Լրտեսը՝ իր անմիտ յափշտակութեան մէջ, յայտարարած է եղել գաղտնի ոստիկանութեան, թէ Գալստեանի մօտ պահվում է փշոտիոզ լի մի արկղ»։ Ոստիկանութիւնը, արբեցած իր անելիք գիւտով, վրայ տուեց և բռնեց Գալստեանի կոկորդէն... և պարզվեց որ սա բոլորովին ուրիշ Գալստեան է, միանգամայն անմեղ և անտեղեակ ո՛ևէ արկղից, նոյնիսկ անդինամիտ...

Մի ուրիշ դէպք, դարձեալ Թիֆլիսում, մայրաքաղաքը Կովկասի։ Ցանկարծ հրաման է գալիս խուզարկել հայ բանաստեղծ Իսահակեանի բնակարանը։ Եւ ի՛նչ, բագի մէջ գտնում են մեծաքանակ փամփուշտներ... Ուրեմն մեղաւորութիւնը աներկբայ է։ Սակայն այս անգամ ոճիրի հեղինակը շատ անյաջող էր կատարել իր տըխուր դերը և կեղծիքը շուտ բացվեց։ Թիֆլիսը իմացաւ այդ, բայց չափշեց — չէ որ սովորական «ձեւերից» մէկն է այդ...

Այդ օրինակ փաստերը բազմաթիւ են։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:07 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այդ չարամիտ ու ոճրային «քաղաքականութեան» շնորհիւ տեղի ունեցան շքեղաձեւ որոնք են և կը մնան ռուսական դատավարութեան համար, իբրեւ մշտական նախատինք, աննախընթաց դատաստանական տարեգրութեան մէջ։ Անդէնք բռնվեցին մեղադրուողների փոխարէն, մէկը տուժեց միւսի փոխարէն, և այդ՝ անհաւատալի թեթեւամտութեամբ։ Քննիչը իր սեփական քմահաճոյքով կարգադրում է ձերբակալել մի շարք հայեր,—նրանց չէին գտնում։ Այն ժամանակ Լիժին խուզարկել և բանտարկել էր տալիս բոլորովին անմեղ մարդիկ, որոնք պատահաբար կրում են փնտռվածի անունը կամ ազգանունը։

Փաստերը թող խօսեն։

1. Ոստիկանութիւնը որոնում էր «Իշխան» կեղծ անունով մէկ «յեղափոխական»։ Եւ ահա մի օր կալանաւորում են Երեւանի մէջ և բանտարկում Իշխան Արղութեանին որը, ինչպէս տեսնում էք, անբաղդութիւնն ունէր իր ազգանուան հետ կրելու Իշխան տիտղոսը։ Մարդը զարմանում, բողոքում է։ Ունայն։ Ամիսներ յետոյ պարզվեց, որ որոնվածը այլ «Իշխան» է, որ այդ միջոցին գտնվում էր Կովկասի սահմաններից դուրս՝ Վանի մէջ, և յայտնի է այն տեղ իբրեւ քաղաքական-հասարակական գործիչ։ Վանի «Իշխանը» բարոյական պարտք է համարում, ռուսական հիւպատոսի միջոցով, յայտնել քննիչ Լիժինին, որ ինքը Թիւրքիա է, և ուրիշին կալանաւորելը անարդարութիւն։ Սակայն, Լիժին մնում է անդրդուելի իր սխալի մէջ, և Իշխան Արղութեան տանջվեց բանտում... Երկու տարի

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:06 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և դեռ ով գիտէ ի՞նչքան պիտի տանջվի։

2. Մի օր, ծայրայեղ խստութեամբ կալանաւորեցին Ներսէսեան Դպրոցի ուսուցիչ Մալխասեանին, որ ոչ միայն յեղափոխական կուսակցութեան մասնակից չէր, այլ յայտնի է, իբրեւ հակառակորդ քաղաքական յեղափոխական գործելակերպի։ Բայց և այնպէս բանտարկեցին և ամիսներ պահեցին բանտի մէջ, միայն այն պատճառով, որ նրա նախանունը նոյնն էր ինչ մի ուրիշ Մալխասեանի, որին ոստիկանութիւնը որոնում, բայց չէր գտնում։ Այս Մալխասեան չը լինի, այն լինի — ի՞նչ տարբերութիւն։

3. Որոնում են Թիֆլիսում Գէորգ Օրտոյեան անունով մէկ հայ, և նրան չգտնելով՝ բանտարկում են մի ուրիշ Գէորգ, Գէորգ Առաքելեան։ Առաջինին եղբայրը և ազգականները վկայում են որ իրանց Գէորգը վաղուց սպանված է Պարսկաստանում, և նոյնիսկ Պարսկական հիւպատոսարանի պաշտօնական վաւերացումն են ցոյց տալիս։ Սակայն բոլորովին ի զուր։ Քննիչին հաճելի էր կապանքի տակ պահել մի հայ, Գէորգ անունով, «եթէ Գէորգ Օրտոյեան սպանված է, թող նրա տեղ նստէ Գէորգ Առաքելեան» — վրճռեց արդարութեան սեւ պաշտօնեան։ Եւ ահա երեք տարուց ի վեր Գէորգ Առաքելեան փակված է բանտի մէջ՝ և ներելի միամտութեամբ կըսպասէ ... արդարութեան։

4. Բաթումի մէջ փնտռվում էր Հրանդ Սասաֆեան անունով հայը, Տրապիզօնցի, արհեստով կօշկակար։ Սակայն նա վաղուց հեռացած էր

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այդ քաղաքից։ Բայց միթէ չըկա՞յ Բաթումի մէջ Հրանդ անունով մէկը — հարցրեց քննիչը։ Զարթաղդ զուգադիպութեամբ, Բաթումի հայոց հովիւ Մելեան քահանայի որդին կոչվում էր Հրանդ, նրա բռնեցին և բանտարկեցին։ Եւ ինչո՞ւ չը բանտարկել,—ուսանող մարդ, անունը Հրանդ, և այն էլ հայ քահանայի որդի... Լիժինի «արդարութեան» հոգը չէ բնաւ որ սա Հրանդ Մելեան է, իսկ փնտռվածը Հրանդ Սարաֆեան, սա ուսանող է, նա՝ կօշկակար, սա Բաթումցի է, նա՝ Տրապիզօնցի։ Բաւական է, որ անունը Հրանդ է. թո՛ղ փտի բանտի մէջ! դրանից աշխարհ չէ քանդվի...

5. Երեւանի թշուառ գերեզմանոցը ունէր տարիներից իվեր մի խեղճ գերեզմանապահ, ծերունի, ուժասպառ, հազիւ կարող չարժվելու, նոյնքան անվտանգ, որքան գերեզմանը,— անունը Հաջի Յակոբ Աւետիսեան, Կեսարացի։ Ու մի սեւ օր այդ զառամեալ անբաղդը քաշվեց ոստիկանական պահակարանը և այն տեղից՝ բանտը։ Խեղճը չէր կարողանում հասկանալ թէ ինչ պատահեց։ Նա լաց էր լինում, գլուխը յուսահատորէն խփում պատերին, իր ոսկրացած ձեռքերով պատուհանի երկաթներն էր ուզում «պոկել», և օրն ի բուն ճչում էր, կրկնելով իր աղեխարշ երգը. «Ի՞նչ է իմ մեղքս. ի՞նչ եմ արել ես...» Եւ անմեղ գերեզմանապահը չէր կարող երեւակայել, հարկաւ, որ ինքը բռնված է մի այլ Հաջի Յակոբի փոխարէն, որը Հաջի Յակոբ է, այո, բայց Հաջի Յակոբ Կոդօեանց, և ո՛չ թէ Աւետիսեան, Մուշեցի և ոչ թէ Կեսարացի, երիտասարդ և ոչ թէ զառամեալ, զինակիր և ո՛չ թէ գերեզ-

Generated on 2018-06-08 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

մանապահ, և որը վաղուց արդէն հեռացած է Երեւանից, գնացել է իր վաթանը— Տարօն։ Ցուսահատ գերեզմանապահը կիսախելագար եղաւ, սակայն նրան չարունակեց պահել բանտի մէջ,— այդ է պահանջում պետութեան շահը...։

6. Նոյն արդարութեամբ և ձեւով՝

ա) Վռամ Վահանեան, Տրապիզօնցի, բայց Թիֆլիսաբնակ, բանտարկված է Վահան Փափազեանի փոխարէն, Վանեցի, այժմ անդամ Օսմանեան Պարլամէնտի։ բ) Գարեգին Գէորգեան, Հին-Նախիջեւանից, բանտ է նստեցրած Գարեգին Միրաքեանի փոխարէն։ գ) Ղեւոնդ Մելքոնեան, Գանձակի բնակիչ, բանտարկված է, Արտաշէս Մելքոնեանի փոխարէն, Թիֆլիսցի։ դ) Բագուաբնակ Նիկօլա Տէր-Յովհաննէսեանի պատճառով։ որին որոնում են, բայց չեն գտնում, Բագուի մէջ բանտարկված էին չորս հոգի, չորսն ալ Նիկօլա, բայց տարբեր ազգանուններով, տարբեր քաղաքներից, տարբեր գբաղմունքի տէր....։ Անունը Նիկօլա — այդ արդէն յանցանքը ապացուցող փաստ էր...։

Ու այդպիսի փաստերը ո՛չ թիւ ունին և ո՛չ վախճան։ — Հարկաւոր է միայն սիրտ ունենալ՝ և գրի անցկացնել այս վրդովիչ օրինակները, որ այնքան ընտանիքներ սուգի և վշտի ենթարկեցին։ Այսքանն էլ, սակայն, բաւ է՝ ճշգրիտ գաղափար տալու, թէ ի՞նչ խելագար ամբարտաւանութեան է հասել «զաւեշտաբարոյ» հալածանքը, դրված դատական քննութեան դիմակի տակ...։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԽՈՒՑԵՐԻ ՄԷՋ

Անարդարութի՛ւն՝ խուզարկութեան ժամանակ։ Անթոյլատրելի ապօրինութիւն ձերբակալումների գործում։ Սակայն դա վերջաբանը չէ։

Ահա և՛ բանտային խուցը։

Ներքին, անմատչելի աշխարհը, ուր ո՛չ աչք կարող է թափանցել, և ո՛չ ձայն կը հասնի։ Ու այդ «անկօնդրօլ» թագաւորութեան մէջ է, որ ամենից շատ երես է առնում ոստիկանական բռնապետութիւնը փանջանքը, որի գերին է, այսքան տարիներից ի վեր ռուսական բանտը։

«Բոլոր միջոցները թոյլատրելի են» — այդ էր հրամանը ոստիկանական-քննիչին։ Ու այդ ոճիրապօրինութիւնը նպատակ ունէր սարսափ գՃել կալանաւորների վրայ, երկիւղի ազդեցութեան ներքոյ՝ դաւեր ստեղծել և այդպէսով մեծացնել «քաղաքական գործը»։

«Հայ կալանաւորները Նովոչէրկասկի և Ռոս-
«տովի մէջ,—գրում է բանտարկեալներից մէկը—
«չրջապատված են բացառիկ պայմաններով։ Սը-
«խալ է և սուտ՝ ասել թէ Ռուսաստանում չկայ
«բանտային տանջանք։ Ո՛չ։ Նա կայ։ 25-30 հոգի
«պառկեցնում են մի խուցի մէջ, որ հազիւ 6-7
«հոգի պիտի առնէր։ Մահճակալներ չկան։ Ան-
«կողին չեն տալիս, արգիլում են բերել տալ, և
«իրաւազուրկ բնակիչները պառկում են գետնի
«վրայ, հազիւ մի ծածկոց ունեն, կեղտոտ՝ ինչ-
«պէս կեղտը ինքը։ Կերակուր չեն տալիս, նոյն-

Generated on 2018-06-08 12:05 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

«խակ կալանաւորի հաշւով։ Օրական մի կտոր հաց «և ջուր։ Արգիլված է կարդալ գրելը։ Յարաբե-«ռութիւն դրսի աշխարհի հետ — ո՛չ մի կերպ։ «Եթէ բժշկի ցուցմունքով մէկին թոյլատրվի մի «անգամ դրսից ստանալ մի հաց, մի քանի եփած «ձու, մի արկղ ծխախոտ, կիսում են հացը, կտա-«րում են ձուն, և բանում արկղը՝ տեսնելու թէ «արդեօք մէջը թղթի կտոր չէ թաղցված ...։ «Ցուցերի մէջ ցուրտ, գարշահոտութիւն, յու-«սաբեկ մերկութիւն։ Պահապանները անդրդուե-«լի են, ինչպէս ապառաժ, դաժան՝ ինչպէս չա-«ռութիւնը, և սպառնական՝ ինչպէս չանթ...։ «Լաց լինել չենք կարող—ամաչում ենք։ Գոռալ «չենք կարող — արգիլված է։ Ի՛նչ անենք։ Պա-«տերը շատ են հաստ, երկաթները՝ ամուր։ Աշ-«խարհը՝ հեռու մեզանից։ Ի՛նչ անենք, — սպա-«սում ենք։»

Առողջապահական ո՛չ մի նախազգչութիւն կամ հոգածութիւն։ Քանի մի հիւանդներ աղեր-սեցին իրանց համար վառարան վառել, տաք հա-գուստ թոյլատրել — մերժեցին, բժշկական ձե-ւականութիւնների համար քանի մի ամիս սպա-սել տալուց յետոյ։ Շատերը հիւանդացան։

1910 թ-ին Բոստոնը ամբողջ վարակված էր խոլերայով, և նահանգի այս ու այն կողմերում «հպատակները» մեռնում էին ճանճերի նման։— Համաճարակի լուրը հասաւ կալանաւորներին, և բանտի մէջ տիրեց սև սոսկումն։ Դժուար չէ երե-ւակայել կացութիւնը մարդոց, որոնք իրանց դգում են համաճարակի շղթայի մէջ, առանց կարենալ օգ ունենալ, բժիշկ կանչել, և կամ հա-կավարակիչ ունէ միջոց ստեղծել։ Յուսահատ և

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

աղերսագին՝ բանտարկեալները բողոքեցին այդ ողբերգական կացութեան դէմ։— Ի՞նչ պիտի լինի, կրկնում էին ամէն կողմից, եթէ համաճարակը վարակէ և բանտը։ Կարևորութիւն ուշադրութեան չեղաւ։ Եւ բանտարկեալները իրանց ծնողների ու սիրելիների հետ մնացին այն ճնշիչ համոզման մէջ, որ քննիչ Լիժին, միացած ոստիկանութեանը, դիտմամբ է անում այս բոլորը, որպէսզի կարելի լինի «անպատասխանատու չարիքի» միջոցով վերցնել մէջտեղից «քաղաքական չարիքը»— կեանքը կալանաւորների։

Ի՞նչ ահաւոր համոզում...։

Մեծ երևակայութիւն է՞ պէտք, միթէ, պատկերացնելու համար, թէ ինչ օրեր և գիշերներ էին անցկացնում երկաթեայ պատուհանների յետեւը ճզմուած մարդիկ, այն ահարկու օրերին, երբ խօլերան նոյնքան իրական էր քաղ նահանգի մէջ, որքան պահապանի սուրը՝ ֆոկ բանտի ներսը...։

Ցաջորդ տարին հանդէս եկաւ մի այլ աւեր։

1911-ի Յունվարի սկիզբներին, Նովոչէրկասկի բանտի մէջ երևցաւ փէթ հիւանդութիւնը, որ հետզհետէ սպառնական չափերի հասաւ։ Թիւրիմացութեամբ «բանտ» կոչւող այդ նախնական ընդարձը, չինուած է առաւաւելն 270 մարդու համար, ուր սակայն այդ ժամանակ բանտարկեալների թիւը հասնում էր 850-ի։

Այս պարագան միացած առողջապահական պայմանների բացակայութեանը, բնականաբար պիտի զարկ տար փէթի համաճարակին, և իրօք Մարտ ամսին այդ հիւանդութիւնից բռնուողների

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւը 100 ից անցաւ, իսկ մեռնողների թիւը՝ Յունուար 1—13 քսանի հասաւ։

Մարտի սկզբին բանտ այցելեց բժշկական տեսուչը։ Խօսք տանք այդ պաշտօնական անձին։

«Բանտի խուցերը հնար եղածից աւելի լեցուած են կալանաւորներով։ Օդը հեղձուցիչ է և գարշահոտ։ Խուցերի մէջ օր ու գիշեր դրուած են գոգաշ կոչուող փայտէ տակառներ, կալանաւորների բնական պէտքերի համար, այդ տակառները էլ աւելի անտանելի են դարձնում՝ առանց այդ էլ ախտաւոր մթնոլորտը։ Տակառների մօտ դրուած են փայտէ ամաններ, որոնցից բանտարկեալները առնում են իրանց խմելու ջուրը։ Բանտարկեալների սպիտակեղէնները խիստ աղտոտ են,— երեք շաբաթը մի անգամ հագիւ են փոխում։

«Յունուար 11-ին բանտային բժիշկը գրած է եղել բանտի կառավարիչին՝ թէ բանտարկեալների մէջ տիֆ է ծագել։ Բայց կառավարիչը հիմնուելով նահանգապետ Թաուպէի հրահանգի վրայ, արգիլեց բժիշկին՝ հիւանդութեան մասին որևէ բան հաղորդել բժշկական վարչութեան։ Այդ է պատճառը, որ բանտային հաշուետուութեան մէջ՝ տիֆի մասին խօսք անգամ չըկար, և դրա փոխարէն ասուած էր՝ թէ կալանաւորները հիւանդացեր են տենդով։

«Զը նայելով բանտային բժիշկների մշտական պնդումներին, թէ անհրաժեշտ է պէտք եղած տեղեկութիւնները հաղորդել առողջական վարչութեան՝ տիֆի մասին, բանտի վարչութիւնը տիֆոմէ և յամառաբար ծածկել է համաճարակի գոյութիւնը։»

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այդ ոճրային «գաղտնապահութիւնը» սա-
կում պատճառեց Նովոչէրկասկի բանտի մէջ փակ-
ուած հայերի ծնողների ու ազգականների, որոնք
Մարտ 24-ին, Դատական Մինիստրին ուղարկեցին
հետևեալ հեռագիրը,

«Նովոչէրկասկի բանտի մէջ այս պահուս
«տիֆի սոսկալի համաճարակ է տիրում. հար-
«իւրից աւելի կալանաւորներ հիւանդ են, ինչ-
«պէս նաև բանտի կառավարչի երեք օգնական-
«ները, 6 գրագիր, 10 վերակացու, բանտի
«բժիշկը և իր երկու օգնականները: Մահա-
«ցութիւնը մեծ համեմատութեան է հասել:
«Վերակացուներից երկուքը արդէն մեռել են:
«Առողջապահական պայմանները բանտի մէջ
«անտանելի են: Բանտը շինուած է 250 մար-
«դու համար, մինչդեռ այս պահուս այնտեղ
«800-ից աւելի կալանաւորներ կան: Բանտային
«շէնքը գտնուում է քաղաքի ամենացած տեղը,
«ուր անպակաս է տենդը: Խուցերի յատակնե-
«րը ասֆալթից են շինուած: «Դաշնակցութեան
«Գործով» ամբաստանուող հայերը երրորդ և
«չորրորդ տարին է որ բանտն են գտնուում:
«Բոլորին առողջութիւնն էլ խիստ խախտուած
«է: Շատերը ծանր հիւանդ են — թոքախտով,
«ոսկրացաւով, նէօրասթէնիով, աչքացաւով:
«Մի քանի հոգի լուսնոտ են դարձել: Երկու
«հոգի էլ խլացել բանտի մէջ: Այժմ էլ բոլորը
«ենթակայ են տիֆի վտանգին, և հասկանալի
«է որ՝ երկար բանտարկութիւնից քայքայուած՝
«չպիտի կարողանան դիմանալ այդ սարսափելի
«հիւանդութեանը:

«Այս բոլորը նկատի ունենալով խնդրում

Generated on 2018-06-08 12:03 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Այդ ոճրային «գաղտնապահութիւնը» սա-
կում պատճառեց Նովոչէրկասկի բանտի մէջ փակ-
ուած հայերի ծնողների ու ազգականների, որոնք
Մարտ 24-ին, Դատական Մինիստրին ուղարկեցին
հետևեալ հեռագիրը,

«Նովոչէրկասկի բանտի մէջ այս պահուս
«տիֆի սոսկալի համաճարակ է տիրում. հար-
«իւրից աւելի կալանաւորներ հիւանդ են, ինչ-
«պէս նաև բանտի կառավարչի երեք օգնական-
«ները, 6 գրագիր, 10 վերակացու, բանտի
«բժիշկը և իր երկու օգնականները: Մահա-
«ցութիւնը մեծ համեմատութեան է հասել:
«Վերակացուներից երկուքը արդէն մեռել են:
«Առողջապահական պայմանները բանտի մէջ
«անտանելի են: Բանտը շինուած է 250 մար-
«դու համար, մինչդեռ այս պահուս այնտեղ
«800-ից աւելի կալանաւորներ կան: Բանտային
«շէնքը գտնուում է քաղաքի ամենացած տեղը,
«ուր անպակաս է տենդը: Խուցերի յատակնե-
«րը ասֆալթից են շինուած: «Դաշնակցութեան
«Գործով» ամբաստանուող հայերը երրորդ և
«չորրորդ տարին է որ բանտն են գտնուում:
«Բոլորին առողջութիւնն էլ խիստ խախտուած
«է: Շատերը ծանր հիւանդ են — թոքախտով,
«ոսկրացաւով, նէօրասթէնիով, աչքացաւով:
«Մի քանի հոգի լուսնոտ են դարձել: Երկու
«հոգի էլ խլացել բանտի մէջ: Այժմ էլ բոլորը
«ենթակայ են տիֆի վտանգին, և հասկանալի
«է որ՝ երկար բանտարկութիւնից քայքայուած՝
«չպիտի կարողանան դիմանալ այդ սարսափելի
«հիւանդութեանը:

«Այս բոլորը նկատի ունենալով խնդրում

Generated on 2018-06-08 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

«ենք ձերդ Գերազանցութիւնից՝ ազատ արձա-
«կել բանտարկեալները կամ փոքրիկ գրաւա-
«կաններով և կամ երաշխաւորութեամբ, ո-
«րովհետև իրանց ընտանիքները նիւթապէս
«քայքայւած լինելով, հնարաւորութիւն չու-
«նեն մեծ գումարներ տալու։ «Դաշնակցու-
«թեան Գործի» նախնական քննութիւնը ար-
«դէն աւարտած է։ Բանտարկեալների ընտա-
«նիքները գրեթէ խեղակորոյս են դարձել այն
«սոսկալի վտանգի հանդէպ՝ որին ենթակայ են
«իրանց մերձաւորները։» 1)

Մինչդրիցոչ մի պատասխան...։

Սակայն այդ՝ լոկ ինքնին սարսափն էր, իսկ

---

(1) Այդ գուժկան հեռագրի առիթով Պետերբուրգի մամուլի մի օրգան «Ռէչ» լրագիրը հրատարակեց հետևեալը.— «Բանտարկեալների վիճակը իսկապէս զարհուրելի և ուղղակի յուսահատական է։ Առանց սոսկումի չէ կարելի երևակայել՝ որ երկարատև բանտարկութիւնից հիւանդ և հիւծւած այդ անձերը փակւած են վարակւած և մինչև բերանը լեփ լեցուն բանտի մէջ։ Ցիսուն հոգի խծկւած են մի խուցի մէջ, և բոլորին են պառկցնում սառ յատակի վրայ։ Խուցի մէկ անկիւնը, ուր գըտնւում են հաշտարխանցի հայերը, կոչւում է «Սև գաղաք»։ Ցերեկը նոյնիսկ այնքան մութ է, որ իրար ճանաչելու համար՝ բանտարկեալները ստիպւած են լուցկի վառել։ Ջմռան առաւօտները այս խուցի մէջ գտնւողներից շատերը ուշաթափւում էին։ Հայերի մեծամասնութիւնը բանտ մտաւ առողջ վիճակի մէջ, իսկ այժմ շատերը ընդմիշտ կորցրել են իրանց առողջութիւնը։ Եւ այս դեռ պատիժը չէ, այլ միայն «նախնական բանտարկութիւնը», որ գործադրւում է մինչև իսկական դատավարութիւնը, մինչև իսկական դատավճիռը, որ յաճախ անպարտութեամբ է վերջանում։ Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ մահափորձ այն մարդոց դէմ, որոնց յանցանքը տակաւին հաստատւած չէ. սա «նախնական» միջոց չէ, այլ ամենասոսկալի տանջանք, նոյն մահապատիժը, բայց աւելի դանդաղ, ուստի և աւելի վատթար։»

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բռնապետութեան գործակալները գրանով բաւականացող չեն — նրանք նախանձելի եռանդով «բնականին» կցում են և արհեստականը։ Ու ահա ֆելաբոնը, մարգիներ, ֆոկեր, տանջանքի այլևայլ ձեւեր...։

Բայց թող փաստերը իրանք խօսեն։

Բագուի բանտի մէջ էր։ Քննիչի գործակալները ուզում էին անպատճառ ֆազգինֆինեզ իմանալ, ասել տալ կալանաւորին, Ղ. Մ. կարևոր բաներ, որ գոյութիւն չունէին։ Երիտասարդը դիմադրում էր յամառօրէն, ազնուութեամբ։ Եկաւ «բարձրից» հրամանը.— խեղճի գանգը առան գործիքի մէջ և սկսեցին սեղմել, ա՛յնքան, որ ուշաթափուեց։ Եւ նոյնը վերսկսուեց քանի մը անգամ, կրկնելով ահաւոր խօսքը «մինչև որ չասես, մեր ձեռքից չես ազատուիր...։

Մի այլ բանտում, Թիֆլիս, բանտարկեալը, Կ. Տ. Մ. երկու շաբաթ շարունակ ենթարկուեց սպանիչ ծեծի, փոկերով։ Քանի՛ քանի անգամ նրա մարմինը կապտեց, ծածկուեց ուռոյցներով —սակայն տանջողները չէին դադրում, և խոստովանութիւն էին պահանջում,..։

Բօստօվի բանտը վկայ եղաւ աւելի ծանր տեսարանների։— Ահա կալանաւորներից մէկը, իրաւաբան Մետնիկեան, ամիսներ ու ամիսներ բողոքեց իր անմեղութեան մասին, դատ խնդրեց. քննութիւն պահանջեց, սակայն դատի տեղ՝ նրան ցոյց տուին մտրակը, քննութեան տեղ՝ նրա երեսին գոչեցին «տանջանքի» ահռելի անուններ, ու անբախտ կալանաւորը յուսահատ ու ահաբեկ, խելագարութեան հասաւ...։ Ճչում է նա, յուսահատ խօսքերով իր վիշտն է երգում, սակայն

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այլևս նայող, հասկացող չկայ։— Խելագար է, ասում էին ամէնքն ու անցնում։

Խելագար է և հարևանը — ուժակորոյս մի ծերունի, նիհար՝ ինչպէս կմախք, և թշուառ՝ ինչպէս վիշտը։ Գերեզմանի պահապան էր նա և չիրիմի աշխարհից դէնը աշխարհ չէր ճանաչում։ Նրան էլ բռնեցին,— իր մեղքը չը գիտէ։ Նրան ճգմեցին խուցի մէջ — պատճառը չը գիտէ։ Նրան փոկերի հարուածի տակ տանջեցին։ — ինչու, Աստուած գիտէ։ Եղունգներով պատերը քերեց, պոռաց, գոռաց, ճչաց ու ճչոցով՝ խելքը կորցրեց։ Ու այժմ, երբ արտասուքի ծիծաղով՝ ազատութիւն է պահանջում, պահապանը ցոյց է տալիս մտրակը — չէ՞ է որ խելագար է...։

Ահա և մի այլ զոհ։ Քահանայ է նա, Տէր Նիկողայոս Սողոմոնեան, Գանձակի Աղջաղալա գիւղից։ Բռնեցին, փակեցին, տանջեցին, ու վշտահար հայրը մեռաւ առանց իմանալու իր յանցանքը։ Մահուան տագնապի մէջ, խեղճ քահանան մրմունջով ու տնքոցով հասկացրեց սենեկակից բանտարկեալներին, տանջանքի այդ ակամայ վկաներին, որ մեռնում է։— ճչաց, օդ խնդրեց, իր կնոջ անունը արտասանեց, ուզեց վերջին համբոյրը տալ իր զաւակներին...։ Եւ նրա՝ վեց մանկահաս զաւակները. որ հոգ փոխարէն գլուխ ստացան, երբէք չիմացան, ու չպիտի իմանան թէ ինչու բռնեց իրանց հայրը, և ինչու մեռաւ օտարութեան մէջ, բանտի խուցերում...։

Երկու մահ Երևանի բանտի մէջ — զոհերը՝ Եգիպտացի երկու երիտասարդներ։ Ու մեռան, հարցնելով օդին յառած մարող աչքերով, «ին-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չո՞ւ համար։» Իսկ վլատիկավկազի բանտին մէջ հոգեվարքի տանջանքին ենթակայ կալանաւորը, վերջին ոյժը հաւաքեց և այս խօսքերը արտասանեց՝ «գիտեմ պիտի մեռնեմ, բայց գէթ յանցանքս իմանամ ու այնպէս մեռնեմ...։»

Մեռաւ նա, մեռան ուրիշները, հարցը չըրթունքներին, և դեռ քանիները պիտի մեռնին նոյն հարցով...։

Ու մնացողները, դժբախտ ականատեսներն ու վկաները այդ գերբնական ողբերգութեան, ի տես բանտից դուրս տարուող դիակների, վախը սրտի մէջ, և ոխը՝ գլխի մէջ,— մրմնջում են յուսահատօրէն։

— «Գուցէ վաղն ալ մեր դիակները տանեն։

«Բայց ինչո՞ւ համար...։»

Ու մի օր տարան դիակը...։

...Բանտի դարպասի մօտն էր։

Ահագին բազմութիւնը փեթակուած առաւօտից իվեր, սպասում էր։ Ով ասես չկար։ Գիւղացի ծերունի քահանան, որ եկած էր որդուն տեսնելու. հեռուից ոտով քալած գեղջկուհին, որ 8 ամսից ի վեր զաւակի երեսը չէր վայելել. Ուսանողը, որ հագիւ թոյլտուութիւն էր ստացել եղբօրը այցի գնալ. աղգականներ ու ծնողներ — բոլորն էլ վշտոտ, յոգնած, արիւնակէզ և տանջալից, բոլորի սիրտն էլ, աչքերն էլ, ուշք ու միտքն էլ կապուած այդ դժգոյն քարերին, որոնք բանտի պատն են կազմում, ու բոլորի կրծքի տակ մի

Generated on 2018-06-08 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

իղձ միայն — տեսնել, գէթ մի անգամ, գէթ մի վայրկեան, սիրական կալանաւորը ու լսել նրա չրթունքներից մի ձայն, մի յուսատու խօսք...։

Ահա դարպասը բացուեց։

Սրտատրոփ բազմութիւնը շարժուեց, ինչպէս փոթորկուած ալիք, ու իսկոյն՝ կայծակնահարի նման՝ յետ խաղաց։— Դարպասի մէջ դագաղ երևաց...։

Բազմութիւնը քարացաւ։

Ու երբ քահանայի հրամանով, բաց դագաղը վար դրին կրօնական աղօթք ասելու, բոլոր աչքերը դարձան դէպի նա...։

Ո՞վ էր նա...։

— Բալա՛ս! ճչաց մի կին։

Բառ չէր այդ, այլ անմարդկային մի ճիչ, որ շանթեց բոլորը, և պառաւ մայրը նետուեց դէպի դագաղը, ինչպէս կայծակ։ Ոսկրացած բազուկներով դագաղը գրկած, նա իր դէմքը խրեց սառած դէմքի մէջ, ապա գլուխը վեր առած՝ նայեց մարդոց, նայեց երկնքին, ու նորից խրուեց զաւակի դէմքի մէջ, որ ինքը վիշտն էր, անհուն և անսահման...։

— Բալա՛ս։

.....

Եկած էր բալան վայելելու,
Ու միայն դիակը տեսաւ...։

Generated on 2018-06-08 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ներածիւ.

Ինչո՞ւ այսքան խստութիւն և ինչո՞ւ համար այս անարգական «կրճատոցը» դէպի մի ժողովուրդ, որ թէև ճզմված Արևելքի Բռնապետարանների ճանկերի մէջ, տարիներ ու տարիներ եղած է առաջապահ-բարեկամ Ռուսական առաջխաղացման և լաւագոյն պատնէշը երկու սահմանագծերի վրայ, ուր Մահմէտական բռնապետութիւնն էր թագաւորում։

Մեկնութիւնը պէտք է որոնել Հիւսիսի մայրաքաղաքի մէջ, ուր կենտրոնական բռնութեան բոլոր գործակալների հետ, պետական «անիմաստութեան» գոհարներն են պահվում։

Երբ համա Ռուսաստանի անբաղդ յեղափոխութեան հրդեհի միջից՝ գահը դուրս եկաւ անջախջախ, Ցարի կառավարութեան առաջին գործը եղաւ ո՛չ թէ ականջ դնել ժողովրդի կրծքից հնչող ցաւոտ կարիքներին և ընդառաջ գնալ, այլ ընդհակառակը, դիմել խաչի և հալածանքի։

Խաչը—Դուման է։

Իսկ հալածանքը — Դումայի քօղի տակ ծընունդ առած ծով-բռնութիւնների շրջանը, որի չատ էջերը նմանը չունին նոյնիսկ պօբեդօնօսեվեան տիրապետումի օրերին, Ալեքսանդր III-ի օրով։

Generated on 2018-06-08 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Հալածանք անհատների դէմ — «յեղափոխական» մեղադրանքով։

Հալածանք ազգերի դէմ — «անջատական» կասկածով։

Բանտ, աքսոր, կախաղան — դա եղաւ միակ միջոցը մարելու ազատական շունչը, և Հիւսիսի մէջ, ուր ա՛նքան յոյսեր մարեցան, և Վոլգայի ափերին, որ մեծագոյն ոճիրների անյոյզ վկան եղաւ, և Կովկասեան լեռների տակ, ուր երբեմն հոգեշունչ երգեր յօրինվեցան նվիրած «Սպիտակ թագաւորի» գայիսօնին և Լեհական քաղաքներում, որի ծով-վիշտը դարևոր պատմութիւն է երգում...։

Ֆինլանդիան, ասպետական ու խաղաղ Ֆինն աշխարհը, առաջին հարուածներից մէկը ստացաւ։ Հակառակ արքայական դարևոր երդման ու խօստման, Ֆինլանդա-սահմանադրութիւնը փշրվեց ու ոտնակոխ եղաւ (1)։ «Կայսրը երդվել էր հաւատարիմ լինել Ֆինն սահմանադրութեան, այժմ յետ է վերցնում իր երդումը» — ասաց ցարի առաջին մինիստրը, և թաշկինակը հանեց ու սրբեց իր երեսի թուքը, նետված մաքուր շրթունքներից...

Ապա հերթը եկաւ Լեհաստանին։ Ո՛վ չէ յիշում այն անպատմելի տերրորը, որ երեք տարի շարունակ կրակեց Լեհ աշխարհը և յաճախ 1863ը մոռացութեան տուեց, և մտցրեց պատմութեան

(1) ԾԱՆՕԹ. Ցաւում ենք, որ այս գրքոյկի ծաւալն ու ծրագիրը Թոյլ չէ տալիս, գէթ համառօտակի ուրուագծել այն ոճիրն ու սոսկումները, որոնց Թատերաբեմը եղան Ֆինլանդիա, Լեհաստան և Թուսաստանի կենտրոնը։

Generated on 2018-06-08 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

մէջ ոճիրներ, որոնց չէ ճանաչել ոչ մի ոստիկանութիւն։

Երկու «ծայրերը» լռութեան դատապարտելուց յետոյ՝ բռնապետութեան օրվան գործակալը, Ստոլիպին, արիւնոտ ձեռքը դրեց սոսոսական կենդրոնի վրայ—օջախը յեղափոխութեան։

Ի՞նչ անլուր ոճիրներ։ Ռուսական թարմ, ըմբոստ և գաղափարապաշտ երիտասարդութեան ախերը, փոթորիկները լռեցրին, ու նրան արիւնով՝ հողը կարմրեց։

Երբեմն Պետերբուրգ ունէր — որպիսի՛ պատիւ— միայն Պետերբուրգը, այժմ մէն մի քաղաք այդ «պատին» է արժանացած՝ կայսերական սըրբատառ հրովարտակով։

Կար ժամանակ, որ ֆնդակահատումը վերապահված էր պետական բացառիկ «յանցանքների» համար, այժմ դա սովորական ձևն է օրէնքի գործադրութեան։

Երբեմն, գէթ կանայք ազատ էին բանտային սև պանջանքներից, իսկ այժմ կինն էլ յանձնված է կոզակին և կնուտին, կոկարդին և շպօրին։

Կենտրոնը «լռեցրված» էր, և Հրեաներին տըրված հարկաւոր «դասը»։ Եւ այժմ, Պետերբուրգը իր ցինի աչքերը դարձրեց՝ դէպի Հարաւ, դէպի ստորոտը Արարատի ու Կազբեկի, ուրկից ազատութեան երգի ձայնն էր հնչում, եղբայրական արձագանգը Համա-ռուսական յեղափոխական Մեծ Երգին։

Կովկա՛ս.— գեղանի օրրան քաղաքական սիրոյ և ատելութեան, դարևոր թատերաբեմը մահմէ-

Generated on 2018-06-08 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

տական ու քրիստոնեայ մեծ բաղխումների, ուր բիբլիական տապանի պատմական իշևանը՝ Արարատը այնքան սպասեց, բայց դեռ ազգերի ազատութեան երազը չը վայելեց...։

Այդ բազմալեզու երկրի(1) համար կառավարութիւնը յատուկ ծրագիր մշակեց — անարդ և ոճրամիտ։ Նախ որոշեց բաժանել Վրացիները Հայերից, ու այդ նենգ նպատակով խոստացաւ Վրացի ազնուականութեան, որը տարաբաղդաբար, դեռ բաւական ազդեցութիւն ունի ժողովրդի վրայ, ամէն տեսակ «քաղաքական բարիքներ»։ Եւ երբ Վրաց հասարակութիւնը, կրկնակի ոգևորված այդ «ընչչութիւններից» նեռվեց կուի մէջ և Գուրիայում փոքրիկ շարժումն սկսվեց, յանուն ազատութեան, «բարեկամ» և «կրօնակից» կառավարութիւնը նետեց դէպի դժբաղդ գաւառը կօզակների և զօրքերի ահաւոր վաշտեր, հրաման տալով՝ «մարել գուրիական հանրապետութեան շարժումը, առանց խնայելու կեանք ու գոյք, տուն ու չէնք»։ Եւ կրակի ու աւերմունքի, վառօդի և սրերի մէջ մահացրեց փոքրիկ գաւառի փոքրիկ շարժումը։ Աւերմունքին յաջորդեց՝ աքսորը։ Ու ամբողջ Վրաստանը սոսկումի ախ արձակեց և ցած կախ գցեց ձեռքերը...։

Հերթը հասաւ Հայերին։

---

(1) Կովկասի մէջ ապրում են հետևեալ ազգերն ու համայնքները.— Վրացի, Հայ, Ռուս, Թաթար, Ցոյն, Գուրդ, Թաթ, Ասորի, Ուտ, Լեզգի, Ոս, Ասի, Լախ, Գումուխցի, Բոնլիխ, Մեց, Չէչէն, Աբխազ, Չէրքէզ, Աբազ, Կարաչայցի, Նոգայ, Շալժուխ, Գերմանացի, Մոլոտվացի—մոտ 10 միլիոն։ Այդ տասը միլիոնից Անդրկովկասի մէջ ապրում է 6 ու կէս միլիոն ժողովուրդ և գլխաւոր տարրերն են՝ Վրացի, Հայ և Թաթար։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կովկասի հայ ժողովուրդը վաղուց արդէն դարձած էր Պետերբուրգի թշնամանքի առարկան։ Կառավարչապետ Գոլիցին, տիպը անսանձ ռուսարարի, թեթևամիտ և ամբարտաւան, կոզակաշունչ և բռնամիտ, իբրև կառավարչապետ (1897–1904) մի բան միայն արեց— լարեց ամբողջ Կովկասը, թշնամանք սերմանեց ազգերի մէջ և Պետերբուրգը «կրակի վրայ նոր իւղ ածեց»։ Հայը՝ իբրև շարժուն և ինքնուրոյն, նրա ատելութեան յատուկ առարկան եղաւ։ Հարուած հարուածի յետևից իջեցնելով, նա յաջողեց, Պէտէրբուրգի մշտապատրաստ օգնութեամբ, համոզել կենտրոնի կառավարութեան, որ հայոց շարժումների և յեղափոխութեան ղեկավարը հայ կղերն է և հնոցը՝ հայոց եկեղեցին—յիմարագոյն միտք, արժանի իր «Սամօդուր» հեղինակին։ «Պէտք է խլել եկեղեցու հարստութիւնը՝ նրան ուժաթափ անելու համար,—եզրակացութիւնն էր այդ։

Ու ահա 1903-ի Յունիսի 12-ին բարձրագոյն հրաման եկաւ՝ գրաւել հայոց եկեղեցու կալուածներն ու գոյքերը և յանձնել կառավարութեան։» Ոչ մի բողոք և աղերսանք—ոչ հայոց կաթողիկոսինը, ոչ հայ ժողովուրդինը, չօգնեց։ Բռնապետը մնաց անդրդուելի։ Զօրք կանչուեց այդ անարգ կարգադրութիւնը գործադրելու։ Կոտրեցին դռները անպաշտպան եկեղեցիներին։ Նոյնիսկ կրօնական կենտրոնավայրի մէջ, Էջմիածին, փըշրեցին վանքի դրամարկղը։ Բանտերը նետեցին երէցփոխներ։ Հազիւ քանի մը ամիս անցած սակայն այդ անակնկալ վայրկեաններուն դէմ ծառաւ ցասումը և ըմբոստութիւնը։ Եկեղեցիների մամռապատ բակերը պատերազմի դաշտի վերածը-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վեցան։ Արիւնը հոսեց։ Դիակներ դիզվեցին աղօթատեղիների շուրջ և դիմադրութեան ոգին սաւառնեց հայ երկրի վրայ...

Բռնաւորը ստիպվեց գիջել։

Տարին չը լրացած եկեղեցական կալւածները յետ տրվեցան, սակայն, բռնապետութիւնը չը մոռացաւ իր պարտութիւնը, մտքի մէջ խարբսխեց այս փաստը։

«Ով է այս ժողովուրդը, որ համարձակվում է ցարական զօրքին դիմադրել։ Պէտք է դաս տալ նրա։»

Եւ յարմար րոպէին էին սպասում։

Երկու տարի անցաւ։

Յեղափոխութեան հուրը պատել էր ռուսական աշխարհը, և Ցարի կառավարութիւնը չտապեց հայերը չեզոքացնել, աւելին արիւնքամ անել, որպէսզի Կովկասի այդ կարևոր ոյժը անկարող լինի շարժվել և նպաստել հանուր յեղափոխութեան։ Եւ այդ նպատակով յառաջ քշվեց դաւադրական աղետաւոր ծրագիրը, — ստեղծել Հայ-Թաթարական ընդհարում, գինել և նետել Թաթար ամբոխը Հայերի դէմ, և այդպէսով մի կողմից Մահմետական ժողովուրդը սիրաշահիլ և միւս կողմից՝ հայ տարրը սանձել, դնելով նրան ամբողջովին ինքնապաշտպանութեան դիրքի վրայ, անկարող փոքրագոյն մասն անգամ ունենալ պետական ընդհանուր շարժման մէջ։

Այդ դիւական ծրագիրը պատրաստվեց Պէտ-

Generated on 2018-06-08 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

վէական շունչով և յանձնվեց ոճրագործ նախարարի Կովկասեան գործակալներին, իրականացնելու հրամանով։

Ու ահա մի խաղաղ օր, նման բոլոր օրերին, Բագու քաղաքի մէջ, թաթար ժողովուրդը, մահմէտական շունչով հրահրված, առանց պատճառի և առիթի, յարձակում գործեց Հայոց թաղի և փողոցներում պտտող հայերի վրայ։

1905-ի Փետրվար 6-ին էր այդ։

Ապշութիւնը ընդհանուր էր. հակառակ հայերի դիմումներին, թախանձանքին, ոստիկանութիւնը մնաց անշարժ և անտարբեր։ Արիւնը կանգնեցնելու փոխարէն, վերևից հրահանգված ոստիկանութիւնը, ընդհակառակը աւելի դրդեց մահմէտական բէգերն ու ամբոխը, և ահա կռուի փողը հնչեց Անդրկովկասի մէկ ծայրից մինչեւ միւսը։ Բագուից յետոյ Երևան, Նախիջևան, Շուշի, Գանձակ, եղան տխուր թատերաբեմեր աներևակայելի դժբաղդութեան։

Ու դարձեալ հոսեց արիւնը։

Քաղաքները բերդեր դարձան։ Հրացանի որոտը գիւղեր բռնեց։ Հրդեհը թաղեր լափեց։ Գերանդին վար ընկաւ ձեռքերից, որ սրով փոխարինվի։ Ու ամէն տեղ աւերածը գլուխ բարձրացրեց ահաւոր թափով (1)։

---

(1) 1905-1906ին, երկու տարուայ ընթացքում, Հայ-Թաթարական տխուր ընդհարումների պատճառով փնտավեցին ու աւերվեցին 286 գիւղեր, որոնցից 128 հայաբնակ, իսկ 158 Թրքաբնակ։

Վնասված ընտանիքների Թիւը՝ 14,760, դրանից 7265 Հայ, իսկ 7,495 Թաթար։

Վնասված քաղաքներն են Բագու, Շուշի, Գանձակ, Երևան, Հին-Նախ-Իջևան, Ղազախ և Թիֆլիս։ Վնասուածների Թիւը՝ քաղաքների մէջ, նոյնպէս ահագին է։

Generated on 2018-06-08 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Բայց այս անգամ եւս «գնդակը վրիպեց», դարձեալ մի անգամ, պատուաւոր անձնուիրութեամբ, ինքնապաշտպանների շարքեր կազմեցին։ Մարտիկները կողք կողքի կանգնեցան։ Աւելի քան 15,000 քաջեր, դուրս եկած ժողովրդի ծոցից, դիմադրութեան դրօշի տակ մտան և այդ եղաւ լաւագոյն դասը՝ թաթար արշաւանքին։ Ոյժը միացած գաղափարին՝ կատարեց խըրատական մեծ դերը,— դաւադիր կառավարութիւնը «լեզուն կծեց», ու սեւ ոյժերը, որ արեամբ ու արտասուքով ուզեցան ներկել աշխատանքի խաղաղ վայրերը, խրատվեցին, կանգ առան, եղան աւելի հեզ՝ քան մանուկը, աւելի քնքոյշ քան զեփիւռը։

Յեղափոխութեան դասն էր այդ։

«Եղբայրասպան» կռիւը հազիւ վերջացած, չղթայված լեզուները բացուեցին, և նոյնիսկ թաթար ժողովրդին պատկանող անձինք, քաղաքացիական առաքինութիւն ունեցան բարձրաձայն ճշմարտութիւնը ասել։

1906ի Յունիս 10ին, Գանձակի նահանգապետ Ալֆտան գնաց շրջագայելու աւերված գաւառները։ Երբ հասաւ Ղազախ քաղաքը, հրապարակի վրայ հաւաքված հազարաւոր բազմութեան մի-

---

Սպանված հայերի մօտաւոր թիւը.

Բագու՝ 176, Շուշի՝ 126, Գանձակ՝ 132, Հին-Նախ-իջևան՝ 55, Շուշու շրջանի գիւղերում՝ 160, Մինքէնտ՝ 198, Գանձակի շրջանի գիւղերում՝ 212, Գանձակի շրջանի գիւղերում՝ 212, Նախիջևանի շրջանի գիւղերում՝ 114։

Սպանված թաթարների թիւը շատ աւելի է։ Մահմէտականների կորուստի մասին ճիշդ վիճակագրութիւն կազմել հնարաւոր չէ եղել, քանի որ նրանք դժբաղդ սովորութեամբ, ծածկում են սպանվածները, և բոլոր տեղեկութիւնները։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:24 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ջից դուրս եկաւ մի Թուրք Բէգ, և դիմեց Նահանգապետին, այս խօսքերով.

«Ձերդ Գերազանցութիւն,

«Տեսնում էք Նազախ քաղաքը, որ 7-8 ամիս առաջ չէն էր և լիառատ, իսկ այժմ քանդված ու աւերակ։ Այդ աւերը մենք, Թուրքերս չենք արել, այլ հաշտարար դատաւոր Օրլով, որ ահա կանգնած է ձեր կողքին։ Նա մեզ հանգիստ չէր տալիս գիշեր Թէ ցերեկ, անդադար դրդում, ստիպում էր մեզ՝ կոտորել, ջնջել Հայերին անխնայ, անողորմ, առանց սեռի և հասակի խտրութեան, ասելով՝ Թէ կառավարութեան ցանկութիւնն է այդ...»։

Աւելի խիստ և չանթող լեզուով խօսեց մի այլ Թուրք, պատգամաւոր Զիաթխանով, պետական դումայի նիստի մէջ 1906 Յունիս 12ին։

Նա ասաց.

«Կառավարութեան պաշտօնեաները հրաշագեղ Վրաստանը աւերի մատնեցին՝ զօրքի ձեռքով, իսկ Մուսուլմաններին և Հայերին իրար դէմ դրդռեցին, ու կռուեցրին։

«Յայտարարում եմ այս ամբիոնից, որ Թաթարների ու Հայերի մէջ տնտեսական հողի վրայ թշնամութիւն չէ եղել, մենք ապրում էինք իբր բարի դրացիներ և սիրում էինք միմիանց։ Զինված ընդհարումներ մենք չենք ունեցել, եթէ եղել են սպանութեան դէպքեր, նրանք եղել են մասնակի և երբէք այսպիսի հսկայական չափեր չեն առել։

«Մեր պաշտօնեաները և դէնէրալները երևան հանեցին իրանց կատաբեալ սնանկութիւնը։

Generated on 2018-06-08 11:23 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

«Արդէն երկու ամբողջ տարի է՝ մենք լողում «ենք Արեան ծովում, մինչև մեր ծնկները քայ-«լում ենք դիակների միջով։ Թո՛ղ հեռանան «նրանք, թո՛ղ կորչին, բաւական է, որքան «զմայլվեցինք այդ հրդեհների բոցով, բաւա-«կան է, որքան հրճւեցինք ընկած դիակների «տեսարաններով, հերիք է, ինչքան լսեցինք «թշուառ մայրերի ու քոյրերի ողբն ու հեծե-«ծանքը...»

Ի՞նչ ծանր դատավճիռ!

Կարմրե՞ց արդեօք կառավարութեան պետը, և դողաց արդեօք նրա ոճրագործ ձեռքը՝ որով ստորագրեր էր մահաբեր հրամանները։ Ո՛չ։ Կա-տաղած այդ պարտութեամբ, բռնապետութեան մեծ ժանտարմը որոտաց.

— Պէտք է փշրել այդ ոյժը, պէտք է սան-ձել այդ յանդուգն ժողովուրդը։

Եւ այդ եղաւ երկրորդ պոռթկումը անարգ վրէ-ժի, որ առաջինին միացած՝ սպառնաց լինել ան-խիղճ և անողոք...։

Ռուսիա.

Ներքին պոռթկումներին, 1907-ից սկսած աւելա-ցաւ արտաքինը — քաղաքական ուժգին փոփո-խութեան սահմանի միւս կողմը — Իրանի մէջ, և Թիւրքիա։

Ազատութեան և Սահմանադրութեան Ալիքը, վերջապէս, բաղխեց Շահնշահի ապարանքի դըռ-ները։ Դարեւոր քունով մրափած ժողովուրդը

Generated on 2018-06-08 11:23 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

սկսեց շարժվել և Թէհրանի միապետի իշխանութեան դէմ ըմբոստներ երևացին, դուրս եկած խոնարհ ժողովրդի կրծքից և ուղեղից։ Եւ վերդովուած այդ «ՆՈՒՆԿ»-ը զարթումից Իրանի հողի վրայ, Պետերբուրգի կառավարութիւնը իրաւունք համարեց զօրք մտցնել Սալմաստ, Թաւրիզ և Ռաշտ, գործակալներ Թէհրան, բաց պահելու իր արշաւանքի համբան դէպի Ատրպատական, որու վրայ 100 տարուց ի վեր աչք ունի Մոսկովի միապետութիւնը, և դրա հետ միասին սանձ դնելու սահմանադրական շարժման պարագլուխների բերանին ու կոչերին, որոնց արձագանգները հրճըւանքով էին ընդունվում Կովկասեան լեռնաշղթաների շրջավայրերում։

Եւ այն տեղ էլ, Պարսկաստանի մէջ, ուր բռնութեան ճեղքվող միջնաբերդից ազատութեան մեղեդին է հնչում, երբեմն հուժկու, երբեմն լալկան ցարի հաւատարիմ զօրքի յաղթական ճամբին, Իրանի որդոց հետ, կողք կողքի, Հայն էր կանգնած, դրօշը ձեռքին, կուրծքը պատրաստ։ Ատրպատականի հայութիւնը թէեւ փոքրաթիւ, թէև փոքր ոյժ, անարժան համարեց անմասն մնալ, և իր լուման բերեց սահմանադրական բանակին։ Ու Կովկասից եկած Մահմէտական ու Վրացի ազատասէրի հետ, Հայ յեղափոխականը ոչ թէ միայն համակրանք, դրամ, յոյս, այլ կեանք և արիւն տուեց, ու իր դիակով պատուանդան կառուցեց սահմանադրութեան գրաւիչ կոթողին համար։ Եւ Թէհրանում իսկ, սահմանադիր զօրախմբի ղեկավարը, յեղափոխական մի համեստ գործիչ, նոյնպէս Հայ է, Եփրեմը, որ դէմ է դնում, հայ մարտիկների

Generated on 2018-06-08 11:23 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

օգնութեամբ, յետադիմական բանակին և օտար խուժողին։

— Դարձեա՛լ Հայերը...։

Բացագանչում է վայրագ կատաղութեամբ Պետերբուրգի բռնարանը, լի անծայր ու թունաւոր ատելութեամբ, «պէտք է ամբողջ բունը քանդել և անհետք դարձնել։»

— Այս տեղ էլ Հայերն են...

Զեկուցագրում է Կ. Պոլսի Ռուսական դեսպանը, ամօթահար և նախանձոտ, որ մինչ Նէվայի ափերին դուման դառնում է ստուէր կոզակների ձեռքի մէջ, Բոսֆորի ափերում, Երէկեան Ամրոցը Օսմանեան Ներոնի, 1908ի Յուլիսից հնչում է երգը Ազատութեան, և Եըլտըզը գերի է արթնացող ժողովրդի ձեռքին...

Եըլտըզը անձնատուր, պարլամէնտը բաց, խօսքը ազատ, ոճրագործը բանտի մէջ, ու այդ բոլորի կողքին՝ յոյսեր և աշխատանք վաղվան վերածնութեան անունով,— ահա իրողութիւնը, որը տանիլ չէ կարող Ռուս բորբոսնած բիւրոկրասին, մինչև ոսկորի ծուծը միապետական և անձնիշխան։

Եւ այդ խեղկորոյս բիւրոկրասիի գործակալները, ոմանք Պոլսում, իբր դեսպան, ոմանք Փոքր Ասիա իբրև հիւպատոսներ, յամառօրէն պնդում են թէ Հայերն են որ «տօն» են տալիս նոր ըէժիմին Պոլսի մէջ, Հայ յեղափոխութիւնն է, որ շաղկապեց բոլոր տարրերը, և տապալեց արիւնոտ բռնապետը, և մանաւանդ տարածում և սփռում է Օսմանեան կայսրութեան մէջ, հակառուսական հոգի, թշնամանք ընդդէմ Պետեր-

Generated on 2018-06-08 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

բուրգեան հովերի։ — Եւ խմորված այդ ատելաչունչ համոզմամբ ցարական գործակալները, 1909-ից ի վեր չեն խնայում ջանք, դրամ, չքանչան, դաւեր՝ հարուած տալու մանուկ Սահմանադրութեան, կռուեցնելու Հայը Թիւրքի հետ, ոտքի կանգնեցնելու տգէտ Քուրտ տարրը Հայի դէմ, Սահմանադրութեան դէմ։

Կովկաս—Հայը, Պարսկաստան—Հայը, Թիւրքիա—Հայը, ահա դիւանագիտական զառանցանքը Հիւսիսի անճար կառավարութեան, որ գըրգռված «անգոյ փաստերից», ուզում է ջրեթ լուծել, կործանել, փոշի դարձնել ու ընտանիների մէջ ճզմել Հայ սիրտն ու Հայ միտքը. մարդիկ, որոնք մեղք չունեն, և ոչ էլ պատասխանատուութիւն։

Որպի՜սի փոփոխութիւն դերերի!

Այժմ Պօլսի մէջ է, օրրանը Համիտեան Եղեռնի, որ հնչում է ձայնը Թոթովախօս ազատութեան, մինչ Պուշկինի, Գերցինի, Տօլստոյի, և Կարաեվի հայրենիքը, Թատերաբեմը հերոսական պայքարի, դարձել է Տանջարան, ուր բանտերը այնքան լի են, որքան Տաճարները՝ տօն օրերին։

Թիւրքիայում, երեկուան հայրենիքը ընտանիների չը կայ քաղաքական կալանաւոր, իսկ Ռուսաստանում և ոչ մի բանտ, որ ազատ տեղ ունենայ։— Երբեմն Կովկասն էր ապաստանը Թուրքահայ փախստականի. այժմ Կովկասահայը Պօլիս և Թիւրքիա է ապաստանում, զերծ մնալու բանտից և տանջանքից, աքսորից ու Սիբիրից։

Կար ժամանակ, որ Պետերբուրգից ու Կովկասից էր հնչում բողոքն ու նախատինքը ընդ-

Generated on 2018-06-08 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

դէմ Օսմանեան ներոնականութեան, և այժմ Բիւզանդիոնն է դարձել բողոքավայրը ընդդէմ այն ոճիրին, որ տանջանք է Հային, ամօթանք՝ Ռուսին, հալածանք Հայի համար, և նախատինք Ռուս մտքի և Ռուս անուան համար։

Ապաքա՛ղդ Ռուսաստան...։

Վարկաբեկ Թիւրքիան, խաւար Իրանը, սահմանադրական, տէր պարլամէնտի, Սուլթանն ու Շահը աքսորված, և հսկայ Ռուսաստանը—բռնաբրան, լի արիւնով ու կախաղաններով։ Ի՞նչ անարգանք!

Ու այդ անարգանքի վրէժն էլ «այլացեղ» տարրերից պէտք է լուծել...

Ահա այդ է մեկնութիւնը։

Այդ է պատճառը հակիրճ գծերով։

Generated on 2018-06-08 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ՔՆՆՈՒԹԻՆԸ

Այդ «քաղաքական» նախամշակած սիստէմը ինքնին գուշակել է տալիս, որ հսկայ և դժբաղդ այս գործը հիմնված պիտի լինի ո՛չ թէ դատաստանական լուրջ քննութեան վրայ, օրէնքի և խղճի սահմաններում, այլ՝ ընդհակառակը, պիտի ղեկավարվի լոկ քաղաքական նենգ տեսակէտով, բարձր-գաղտնի ոստիկանութեան կողմից տրված հրահանգի համաձայն։

Այդպէս էլ եղաւ։

«Գործը» յանձնվեց քննիչ Լիժինի։

Ով և ինչ է Լիժին։

Տիպը արկածախնդիր Զինովնիկի, որ մի նըպատակ ունի — բարձրանալ, մի փառք — բարձրանալ, մի ճամբայ—բարձրանալ։ Ոստիկան՝ բայց ոչ օրէնսգէտ, խուզարկու, և ո՛չ քննիչ։ Կեղծարար, բայց ո՛չ ուսումնասիրող։ Աննշան մի քննիչ, նա հռչակ ստացաւ այն գործի մէջ, որի անունն է «Նովոբոսայսկի Հանրապետութիւն» երբ կեղծեց փաստաթղթերը, ստեղծեց չեղած վըստանգն ու գրութիւններ, մեղադրողների ցուցմունքներին կցեց քմահաճ յաւելումներ, ու այդ բոլորի համար, փոխանակ դատի ենթարկվելու, ինչպէս պահանջեցին նոյնիսկ Դումայի ամբիոնից, գովաբանվեց «Արդարութեան Մինիստր» Շչեգլովիտովի բերանով, ու դարձաւ ոստիկան-կառավարութեան սիւներից մէկը։ Եւ երբ բաղ-

Generated on 2018-06-08 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

մաթիւ անմեղներ՝ այդ ոճրագործ քննիչի շնորհիւ դատապարտվեցին կախաղանի և աքսորի, նա, իբրև վարձատրութիւն, ստացաւ նոր «քաղաքական գործը», իր եռանդը նորից հրապարակ բերելու համար, և յոյս ունի՝ Պետերբուրգի ըէակսիոնէր օլիկարշիին ցոյց տուած նոր ծառայութեան համար, բարձրանալ՝ պաշտօնի արիւնոտ սանդուխներով քայլել դէպի վեր, դէպի պետական դատախազի պաշտօն, ո՛վ գիտէ, դէպի մինիստրական բազկաթոռ, ա՛յնքան շահաւէտ և այնքան աստեղազարդ է արդի Ռուսաստանի մէջ։

Դատաւոր-ոստիկանի յանցապարտ արարքների դէմ արդար բողոքներ եղան, սրտաբուղխ տրտունջներ լսվեցին բոլոր բանտարկեալների և հասարակութեան կողմից, սակայն նա մնաց իր «դեր»ի մէջ, պաշտպանված վարձու լրտեսների բազմապիսի խմբերով...։

Ու շարունակում է, անխիղճ և անպատկառ, եզակի թեթևութեամբ, սուգ ու սուտ տարածել Հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ, «ամրացած» իր ոստիկանապատ միջնաբերդի մէջ, ոստանը յանցապարտ որոշումների, որտեղից արձակում է հրամաններ մինը միւսից ոճրալից, վերջինը առաջինից սգաւոր։

Ահա և առաքինութիւնը։

Նոյնատիպ դաւն ու «զաւեշտը», որ կատարվում է արդարութեան դիմակի տակ, ամէն օր և ամէն տեղ։

Նստած իր բազկաթոռի մէջ՝ քննիչը, ան-

Generated on 2018-06-08 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

մարդկային ցասմամբ, իրեն զգում է փոքրիկ ցար՝ մեծ Ռուսաստանի։ Դիմացը տեղ է բռնել ժանտարմական օֆիցերը, մշտական վարպետը դաւերի ու կալանաւորման։ Անկիւններում թարգմանները—հոտառու քթով, ամենահպատակ գլխով մշտապատրաստ մեքենաներ, անմահացնելու թղթի վրայ ամէն մի սուտ։ Եւ ի լրումն՝ արդարութեան ներկայացուցիչը,—պրոկուրորը, լուռ, խորհրդաւոր...։

— Եթէ մինիստր լինէի, մռնչաց քննիչը՝ խելագարի նման տեղից վեր ցատկելով, կ'ոչնչացնէի Հայոց լեզուն, գրականութիւնը, եկեղեցին, թատրոնը, կը ցրուէի Հայերը Ռուսաստանի բոլոր կողմերում, և դա կը լինէր վախճանը Հայկական շարժման, պետական այս մեծ վտանգի...։

— Տանջւողը դուք չէք, Պ. Քննիչ, այլ մենք, անմեղ մեղաւորներս, որ դարձել ենք քաղաքական դաւադիրներ, ենթակայ բանտարկութեան, ու աքսորի, մարդասիրական պարզ համակրութեան համար, ուղղած բազմատանջ ժողովրդի արդար դատին։

Պրոկուրորը միջամտեց։ Փոթորիկը անցաւ։

— Դուք մեղաւոր էք հետևեալ կէտերում, վերսկսեց բոպէաբար խաղաղուած քննիչը,—ապօրինի ճանապարհով զէնք էք գնել, զինել ժողովուրդը և մի մասն էլ ուղարկել Թիւրքաց Հայաստան, կազմակերպել էք զինուած խմբեր, հիմնել էք գաղտնի տպարան, ու հրատարակել արգիլուած թերթեր՝ գաղտնի կազմակերպութեան անունից, որի մի անդամն էք դուք։ Ի վերջոյ՝ մեղաւոր էք՝ մի շարք տէրրորների համար, կատարված պետական պաշտօնեաների դէմ։

Generated on 2018-06-08 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Այդ հանրածանօթ բանաձևն է պատրաստված ժանդարմական վարչութեան մէջ և առաջարկված բոլոր կալանաւորներին, դեռ շատ ու շատ տարիներ առաջ, երբ հանդէս եկաւ «Հայկական անկախ թագաւորի» ցնորական կասկածը։ Պետական ապահովութեան Կովկասեան ներկայացուցիչները տեղեկագրեցին կենտրոնին, որ Անդրկովկասն է շարժման աղբիւրը, և ամէն մի Հայ երիտասարդի բնակարան զէնքի, պրօկլամասիօնների և ռաղմիկների չտեմարան է։ Հրաման տրվեցաւ Պետերպուրգից՝ ու սկսեցին խուզարկութիւններ, համոզված, որ հազարներով հրացաններ կը բռնեն, հարիւր հազարներով փամփուշտ, որ կը բռնան ռումբի և դինամիտի պահեստներ, գաղտնի տպարաններ և իլրումն՝ դաւադրական կազմակերպութիւն՝ ուղղած պետական կազմի ու կառավարութեան դէմ, անլոփոխն ծրագրով...

Ժանդարմական յոյսերը չարդարացան։

Եւ դա նրանց կատաղութեան աղբիւրն էր։

— Եթէ դուք մեզ հարցաքննութեան էք կանչում, Պ. Քննիչ, միայն նրա համար, որ անվերջ մեղադրանքներ բարդէք մեզ վրայ, առանց ականջ դնելու մեր բացատրութիւններին, այն ժամանակ անօգուտ է այս բոլորը, — փակեցէ՛ք մեզ բանտում կամ ուղարկեցէք աքսոր, ինչպէս արդէն...

— Վերադարձէ՛ք բանտ, ընդմիջեց վայրագաբար քննիչը,— գիտեմ, դուք ուզում էք անկախ Հայաստան ստեղծել և մեզ՝ Ռուսներիս նըման՝ ուրիշների վրայ իշխել։ Բայց դուք չարաչար սխալւում էք։ Անգլիայի բարեկամութիւնը

Generated on 2018-06-08 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ձեզ չի օգնի, և մենք Հայաստանը ձեզ չենք տար։ Կը տիրապետենք նրան և կը միացնենք Կովկասի։ Տեսէ՛ք սահմանագլխի երկաթուղին վաղուց պատրաստ է, և մենք միայն առիթի ենք սպասում Թիւրքիա զօրք մտցնելու համար...

Եւ քիչ յետոյ աւելացրեց.

— Եթէ մինչև երեք օր չը խոստովանէք բոլորը, ես ձեզ կը փակեմ բանտի մէջ մի տարի, երկու տարի, կը գրկեմ կերակրից և անկողնուց, չեմ թոյլ տայ մի հատիկ բողոք կամ խնդրագիր, կ'արգիլեմ ամէն մի տեսակցութիւն, կ'անեմ ինչ կամենում եմ, բայց նպատակիս կը հասնեմ...

Ու արեց ինչ կամեցաւ։— «Լուն ուղտ չիներ» հնարեց չեղածը—և շարադրեց ամբողջ պատմութիւն, մի էջը աւելի տխուր՝ քան միւսը։

Պատկերը լրացնելու համար, դարձեալ քանի մի գծեր, առնված ինչպէս միշտ, իրականութիւնից։

Ականաւոր Հայ գրող Ահարոնեան բռնվեց և երկու տարի բանտի մէջ մաշվեց նրա համար, որ՝ իբրև անդամ Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակված պատգամաւորութեան, ներկայացել էր Լահէի ժողովին և նոյն՝ այդ ժողովի Նախագահին—Ռուսաց Ցարի դեսպան Նելիտովին։

Հայ միլիոնատէր Մելիք Ազարեան, վաթսուն ամեայ ծերունի, նեռվեց բանտը այն «կարևոր» պատճառով, որ քանի մի անգամ իր գրասենեակի միջոցով գումարներ էր փոխադրել։

Բժիշկ Աթաբէգեան բանտի մէջ մնաց մօտ

Generated on 2018-06-08 11:16 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

երկու տարի, մեղադրվելով որ Շուշի քաղաքում յանցաւոր գործեր է կատարել, մինչ նա անհերքելի փաստեր էր ներկայացնում, որ այդ «յանցանքի» գործման ժամանակ, ինքը եղել է ո՛չ թէ Շուշի, այլ Բագու քաղաքում։

Մի պատանի, Բ. Մ. այժմ 18 տարեկան, բանտարկված է Խստորէն, 1905-ին գործած «տէրրորներին» համար, այսինքն այն ժամանակ երբ այդ ահաւոր տէրրորիստը 13 տարեկան էր։

Քաղաքացիաբար բժիշկ Օհանջանեան, որ 3 տարուց ի վեր մաշվում է բանտի մէջ՝ մեղադրվում է, իմիջի այլոց, իբր մասնակցող Վլատիկավկազի մէջ կայացած մի ժողովի, մինչ նա այդ քաղաքում չէ էլ եղած, ուրեմն ժողովին մասնակցել չէր կարող։

Պաշտօնեայ Թադէոսեան երկու տարի բանտ վայելեց, լոկ այն պատճառով, որ մի քանի «կասկածելի» հեռագիրների մէջ «Թադէոսեան» անունն է յիշված։

Եօթանասնամեայ մի ծերունի, Եսիգարեան, բռնվեց, բանտի մէջ չարչարվեց, և հագիւ ազատված ահագին գրաւականով, մեռաւ, լոկ այն յանցանքի համար, որ նրա մերձաւոր պաշտօնեաներից մէկը վտանգաւոր յեղափոխական է...

Քանի քանիներ՝ յիշատակենք, վախճան չկայ։

Ոչ մի alibi, ոչ մի վճռական փաստ, նոյնիսկ պաշտօնական, որ մեղադրվողը, այսինչ ժամանակ կովկաս չէր, նշանակված քաղաքի մէջ չէ եղել, — կարևորութիւն չեն գտնում ոստիկանքննիչի կողմից։ Նա հրամայում է բանտարկել, չրջապատել բանտարկեալը խորհրդաւոր լռու-

Generated on 2018-06-08 11:14 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

թեամբ, ահ ազդող ակնարկներով — գուցէ մի բան իմանայ։

Եղան և անուղղակի հալածանքներ։

Գանձակի Նահանգի քանի մը գիւղերի մէջ սպառնացին կալանաւորել կոնոց, եթէ նրանց ամուսինները չը ներկայանան ոստիկանութեան։ Շատ տեղ անմեղ եղբօրը կալանաւորեցին՝ որպէսզի ստիպեն մեղադրվող միւս եղբօրը՝ բանտը գալ։ Մի քանի վայրերում, ոստիկանութիւնը սպառնաց գիւղի ամբողջ համայնքը հալածանքի և տուգանքի տակ դնել, եթէ նրանք չը բռնեն և չը յանձնեն մեղադրուողը։ Մի նամակ, մի պատահական թղթակցութիւն, բաւական էր բանտարկութեան հրաման արձակելու։ Երևանի շրջանի գիւղերից մէկին մէջ՝ կալանաւորեցին մի խեղճ գրչեկոչ, որի յանցանքը եղած է — իր ձիով մի ճամբորդ փոխադրելը։ Յայտնվեց, որ ճամբորդը «յեղափոխական» է եղած։

Բնորոշ մի դէպք։

Մի օր, երիտասարդ մի քննիչ, դեռ չապականված ոստիկանութեան մթնոլորտի մէջ, խօսակցում էր Գանձակի Նահանգապետի հետ, մի Հայ վարդապետի կալանաւորման առիթով։

— Ո՛չ մի դրական փաստ չը կայ ասում էր քննիչը, և չէր վստահանում ձերբակալութեան հրաման տալ։

— Երիտասա՞րդ է վարդապետը, հարցրեց նահանգապետը։

— Այո՛, երիտասարդ է, հազիւ 29 տարեկան։

— Եթէ երիտասարդ է մեղաւոր կը լինի, բռնեցէ՛ք...։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:14 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լիժինեան «մէթոտ» է այդ...

Ուրիշ պատկեր։

Մի գիշեր, ոստիկանութիւնը, Լիժինի հրամանով ներս է խուժում մի տիկնոջ բնակարանը։ Աղմուկ, իրարանցում, երախաների ահ ու դողը, լաց։

— Ի՞նչ էք կամենում, հարցնում է տանտիկինը, ընդունելով այս ահաւոր այցելուներին։

— Ու՞ր է ձեր ամուսինը, Պ. Դաւթեան, նրան ենք որոնում...։

Տիկինը այլայլված և արտասուքը աչքերին, պատասխանում է.

— Ո՛հ, ո՛րքան բաղդաւոր պիտի լինէի, եթէ կարենայի ձեզ էլ նրա մօտ ուղարկել... Նա գերեզմանի զոհ է։

Դաւթեան մեռած էր՝ 8 տարի առաջ, 1903ին և թաղված Թիֆլիսի Խօջեվանք կոչված գերեզմանատուն։

Սակայն ո՛չ այդ «ամօթալի պարտութիւնը», ո՛չ էլ հարիւրաւոր պարտութիւններ չը կանգնեցրին խուզարկու քննիչը, ընդհակառակը նա դարձաւ աւելի ամբարտաւան. մեռածների տեղ բռնել էին տալիս կենդանիներին, անհետացողների փոխան՝ ազգականներին... առանց քննութեան, առանց փաստի, առանց վայրկենական մտահոգութեան...

Քննութիւն իրօք չը կար, բայց Լիժինական «քննութիւնը» տևեց աւելի քան 2½ տարի։ Շարադրվեց 100 հատոր։ Ամէն մի հատորի մէջ աւելի քան 1000 էջ, յաւիտենական արձանը սուտի ու կեղծիքի։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:13 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015057757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ»

Ու այսպէս մի ամբողջ ազգ, տարբեր խաւերից և դասակարգերից կազմված, ամբողջ մի ժողովուրդ նստեցված է Ռեզոլուցիոնիչ Նոմոբանի վրայ, անիմաստուն մի կառավարութեան ձեռքով։

Եզակի փաստ է այս՝ քաղաքական դատավարութեան տարեգրութեան մէջ, եզակի՝ մեղադրանքի անհիմն բնոյթով, եզակի՝ արտաքին ձևով։

Սակայն թէ Ցարը՝ իբրև գլուխը անարդարութեան, թէ Ստոլիպին՝ իբրև ներշնչողը անարդարութեան, և թէ Լիժին՝ իբրև գործադրողը անարդարութեան, քաջ գիտեն, որ մի ամբողջ ժողովուրդ մեղադրելը՝ անիմաստ և վրդովիչ բան է, և շատ դժուար պաշտպանելի դիրք։ Անկարելի է, որ նոյն հովապետական, հակակառավարական և յեղափոխական շարժման մէջ միացած եւ շաղկապված լինին այնպիսի տարբեր եւ դասակարգեր, որոնք իրանց դիրքով ներկայացնում են տարբեր կարծիքներ և տարբեր հայեցակէտեր։

Ահա այս պարզ պատճառով, ոստիկանա-դատական ղեկավար խումբը՝ հալածանք սկսելով ամբողջ ազգի դէմ, միաժամանակ այդ հալածանքը վարագուրեց որոշ դիմակի և որոշ յատուկ կուսակցութեան անուան տակ, և տուեց այդ հրաւակայ հալածանքին «Հ. Ց. Դաշնակցութեան Գործ» անունը։

Generated on 2018-06-08 11:13 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Ի՞նչ է Դաշնակցութիւնը։

Քաղաքական-յեղափոխական Հայ Կուսակցութիւն, հիմնված քսան տարի առաջ, 1890 ին, ընդունելով իբրև նպատակ՝ Թիւրքահայերի քաղաքական ազատութիւնը, իբրև միջոց՝ յեղափոխական կռիւը, և իբրև մեթոտ՝ Թիւրքիայում ապրող բոլոր ազգութիւններու համերաշխութիւնը։ Նա հիմնվեց Կովկասում, բայց գործում էր Թիւրքահայերի համար։ Նա իր ոյժերի, դրամի, զէնքի գլխաւոր մասը դուրս էր բերում Կովկասից, բայց գործ էր ածում շղթայակապ Համիտական Թիւրքիայում։ Այդ շատ լաւ գիտէր Ռուս Կառավարութիւնը։

Ռուսական միապետական բիւրոկրատին, սկսած 1890ական թուերից, յաճախ հարուածեց Կովկասի հայութիւնը, սակայն Դաշնակցութիւնը չը շեղեց իր գլխաւոր նպատակից, և կուի չը բռնվեց Ռուսական իշխանութեան դէմ, մինչև 1903 թուականը, երբ Հայոց եկեղեցիների կալուածքների գրաւման վրդովիչ օրէնքը լեցրեց դժգոհութեան բաժակը, բորբոքեց Հայ ժողովուրդը, և ստիպեց Դաշնակցութիւնը, իբրև ժողովրդի ըսպասաւորին և ժողովրդից ծնունդ առած մարմին, կանգնելու նոյն ժողովրդի կողքին՝ իպաշտպանութիւն նրա բռնաբարված իրաւունքի։ Երկու տարի յետոյ, 1905ին Ռուսաստանի յեղափոխութեան բորբոքման շրջանում, երբ Ցարի գործակալները ստեղծեցին Թաթար-Հայկական ազգարդ կռիւը, Հայ կուսակցութիւնը անխուսափելիօրէն մտաւ այդ կուի մէջ, և քիչ յետոյ, ստիպվեցաւ տարածել իր գործունէութիւնը Կովկասի վրայ էլ, իբրև յեղափոխական և սոցիալական կազմակերպութիւն։ Եւ 1907ին Վիէն-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-08 11:13 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նայի մէջ գումարված կուսակցա-ժողովը հաստատեց այդ գործելակերպը, և ուղղութիւնը, իբրև օրինակ Կովկասի Հայերի քաղաքական կացութեան և նրա դէմ սկսած հալածանքի։

Հոկտեմբերեան Սահմանադրութիւնը քօղ ծածկելով անցածի վրայ, պաշտօնապէս ճանաչեց այդ կացութիւնը։ Կառավարութիւնը ոչ միայն հալածանք չը սկսեց Դաշնակցութեան, ինչպէս և այլ քաղաքական կուսակցութիւնների դէմ, այլ կուսակցութիւններին թոյլ տրվեցան երևան գալ քաղաքականապէս և ճանաչվել երկրի մէջ։

Այսպէս, 1905-ին, Հայ-Թաթարական կռուի ժամանակ ինքը Կովկասեան բարձր իշխանութիւնը ոստիկանապետ Ցիսի միջոցով, զէնք տրուեց Դաշնակցութեան, ինչպէս և Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան, պաշտպանելու փոխարքայանիստ Թիֆլիս քաղաքը, Թաթարների ներխուժումից։

— 1906ին՝ երբ փոխարքայ Վորոնցով Դաշկովի պալատում գումարվեցաւ Հայ-Թաթարական ներկայացուցիչների խաղաղարար ժողովը, Գեներալ Մալամայի նախագահութեամբ, Դաշնակցութեան ներկայացուցիչները հրաւիրվեցան մասնակցելու այդ պաշտօնական ժողովին։

— 1905 ից սկսած, պետական Դումայի ընտրութիւնների մէջ, Կովկասում, Դաշնակցութիւնը հանդէս եկաւ իբրև ուրոյն մարմին, և կառավարութիւնը ճանաչեց կուսակցութեան ընտրական պայքարը, և ընտրվածները Դումայի մէջ ճանաչված էին իբրև Դաշնակցական պատգամաւորներ, ինչպէս օրինակ, այժմ Օսմանեան պարլամէնտի մէջ, այդ կուսակցութեան ներկայա-

Generated on 2018-06-08 11:12 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ցուցիչները կազմում են, որոշ Ֆրակսիոն— Դաշնակցական Ֆրակսիոն անունով։

Նոյն 1905 թուից ամբողջ Կովկասի մէջ համարեա բոլոր գաւառներում, յաճախ թէ նահանգապետներ, թէ գաւառապետներ, թէ ոստիկաններ յարաբերութեան մէջ են մտել կազմակերպութեան անդամների և մարմինների հետ, նրա աջակցութեան, խորհրդին կամ միջամտութեան են դիմել, իբրև ճանաչումն նրա գոյութեան։

Այդպէս էր ամբողջ ժամանակը, սկսած՝ 1905-ից մինչև 1908, երբ կառավարութեան դիրքը, վերև մեկնած պատճառներով, փոխվեց և ցարի իշխանութիւնը, սկսեց հալածել Հայ կազմակերպութիւնը, ո՛չ միայն 1908ի գործողութիւնների, այլ և անցած տարիների համար, սկսած նոյնիսկ 1903ից, և աւելի էլ հին օրերի համար, մոռացած՝ որ ինքը անցեալի մէջ պաշտօնապէս և անպաշտօն կերպով և շատ առիթներով, պետական կեանքի մէջ, ճանաչել էր Դաշնակցութեան գործունէութիւնը, նրա գոյութեան իրաւունքը, և այսպէսով վաւերացում տուել նրա քաղաքական քայլերին։

Այդ այլակերպութիւնն ու հակասումն է, որ կազմում է ներկայ դժբաղդ հալածանքի ոխքաոր և հակաօրինական, փնտ փնցիոլ կողմը, որը եղաւ այսքան չարիքների և վշտերի պատճառ։

Սակայն կայ աւելի կոչոր կէտ, մի գաղափար, որ ցարի կառավարութիւնը կը կամենար միշտ փակ պահել իր դիւանների մէջ, բայց որը պէտք է այսօր հրապարակ բերվի յանուն բանտերի մէջ տանջվող անմեղների։

Generated on 2018-06-08 11:12 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

1908-ի Մարտ ամսին էր։ Պատերազմի երկիւղ և շշուկ կար — պատերազմ Ռուսաստանի և Թիւրքիայի միջև, Բուլգարիայի մասնակցութեամբ։ Բուլգարիան պիտի յարձակվէր Թիւրքիայի վրայ Մակեդոնիայի կողմից, իսկ Փոքր-Ասիայի կողմից, Ռուսական զօրքը պիտի գրաւէր Էրզրումի վիլայէթը։ Պետերբուրգի կառավարութիւնը սկսեց ռազմամթերք ուղարկել դէպի սահմանագլուխը, ու այժ կեդրոնացնել կարս քաղաքի մօտ։ Այդ կարևոր րոպէին Պետերբուրգը ուզում էր իմանալ Կովկասի Հայութեան բռնելիք դիրքը, մի հանգամանք, որ կարող էր մեծ ազդեցութիւն ունենալ պատերազմի ընթացքի վրայ։ Այդ նպատակով, Պետերբուրգից զինուորական գլխաւոր Շտաբի կողմից արտաքին գործերի մինիստրութեան գիտութեամբ, Կովկաս յատուկ զինուորականներ գացին, որոնց յանձնված էր յարաբերութեան մէջ մտնել Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար մարմինների և ներկայացուցիչների հետ, իմանալու թէ ինչ դիրք պիտի բռնէ Յեղափոխական Հայ Կազմակերպութիւնը, Ռուս Թրքական պատերազմի դէպքում։ Այս կարևոր պաշտօնը կատարելու համար, Պետերբուրգի ներկայացուցիչները, զինուորական և սիվիլ, շատ սիրալիր եղանակով, դիմումներ արեցին, և չը մոռացան, հարկաւ, չռայլել իրանց մեծ համարումն ու համակրանքը Հայ ժողովրդի և Հայ կուսակցութեան հասցէին։ Դաշնակցութիւնը պատասխանեց, հարկաւ և հասկացրեց որ իր բռնելիք դիրքը միանգամայն կախված կը լինի այն հանգամանքից, թէ ինչ վախճան պիտի ունենայ Թիւրքահայերի քաղաքական հարցը։

— Բարեբաղդաբար պատերազմը խուսափվե-

Generated on 2018-06-08 11:12 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ցաւ, չնորհիւ արտաքին ճնշման, և բանակցութիւններն էլ կանգ առան։

Արդ, հարց է ծագում, ինչ արամաբանութեամբ, այն կառավարութիւնը, որ 1908ի սկզբին բանակցութեան մէջ էր մտել Դաշնակցութեան հետ, այնքան կարևոր գործով, 1908-ի վերջին անասելի հալածանք է սկսում նոյն կազմակերպութեան դէմ, ո՛չ միայն այն «յանցանք»-ների համար, որ նա գործեր է 1908 ի ընթացքում, այլ այդ պաշտօնական բանակցութեան նախընթաց տարիներում, ամբողջ 8-10 տարվայ ընթացքում։

Հաղուադէպ այլակերպում է այդ, նոյնիսկ միապետութեան գործելակերպի մէջ, քաղաքական ստորագոյն դաւ, որի տխուր պտուղները այսօր վայելում է խաբված Հայ ժողովուրդը։

Եւ որքա՞ն է փաստերի հակադրումը։

1904ին կառավարութիւնը յետ տուեց եկեղեցական կալուածները և դրանով խոստովանեց Հայերի պահանջի արդար լինելը։ 1908-ին բանտ դրեց՝ այդ դատի պաշտպանների անունով՝ անմեղ մարդիկ իբրև պետական յանցապարտներ։

1906-ին, նա ինքը զէնք տուեց Հայ կուսակցութեան՝ Թիֆլիսը պաշտպանելու համար։ 1908-ին այդ մարդիկ, և ուրիշ շատ անմեղներ, որոնք Դաշնակցութեան են պատկանում, կալանաւորման են ենթարկվում, իբրև հակաօրինական ապարքների յանցապարտ հեղինակներ։

1906-ին Էջմիածնի մէջ տեղի է ունենում Հայոց կեդրոնական ժողովը, Հայոց կաթողիկոսի թոյլտուութեամբ և ոստիկանութեան գիտու-

Generated on 2018-06-08 11:11 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

թեամբ։ 1908-ին այդ ժողովին մասնակցողները հետապնդվում և հալածանքի են ենթարկվում, իբրեւ վտանգաւոր սոցիալիստներ և յեղափոխականներ։

1908-ի սկզբին կառավարութիւնը գաղտնի կերպով ու պաշտօնապէս բանակցութեան մէջ է մտնում կուսակցութեան հետ, պետական գաղտնի և շատ կարևոր գործի համար, և նոյն 1908-ի վերջին՝ նոյն կուսակցութեան պատկանողները և նրանք, որոնք չեն էլ պատկանում, նրա կողմից չղթայի տակ են դրվում, իբրև վտանգաւոր տէրրորիստներ և քաղաքական ածիտասիոնի հեգինակներ, արժանի կախաղանի և աքսորի։

1908-ին սկզբին յեղափոխական և սոցիալիստական կուսակցութեան հետ բանակցող կառավարութիւնը, նա, որի ներկայացուցիչները Դումայի մէջ երես առ երես էին գալիս կուսակցութեան պատգամաւորների հետ, 1908 ի վերջին ձեռնարկում է աննախընթաց մի հալածանքի Դաշնակցութեան դէմ, այն պատճառով՝ որ նա սոցիալիզմ է քարոզում, և որ նա Հայ Տանջանքի օրերին, կանգնեց ժողովրդի շարքերում պաշտպանելու ժողովրդի կեանքը, այն բոլոր միջոցներով, հաշուած և՛ տերրորը, որը հրամայօրէն թելադրում էր ինքը արիւնոտ և դաժան իրականութիւնը։

Ու այդ խելագար յափշտակութեան մէջ, 1910-ին կալանաւորվում են պատանիներ, հազիւ 18 կամ 19 տարեկան, որոնք մեղադրվում են 1903-ին կամ 1904-ին կատարված տերրորների համար, այսինքն այն ժամանակի, երբ նրանք հազիւ 12 կամ 13 տարեկան երախաներ է ընդունակ միայն խաղագնդակ բռնելու...։

Generated on 2018-06-08 11:11 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Այդ ոճրագործ խաբէութիւնը տարիների ընթացքում և ներկայ հալածանքը, այդ խաբէական քաղաքականութիւնից յետոյ՝ անջնջելի նախատինք է նոյնիսկ միահեծան կառավարութեան ճակատին, մի սեւ բիծ, որը պիտի լուանալ ո՛չ թէ հալածուողների ու անմեղների արիւնով, այլ նրանց արիւնով, որոնք հեղինակն են, այդ ոճրագործ քաղաքականութեան։...

Ու այդ վերջինհատամ մեծ գործը թողնված է ռուսական դատարանին, որը ինչքան և պակասաւոր ու սեղմուած ոստիկանութեան ձեռքով, կոչված է բարձր պահել արդարութեան ջահը, և լինել հովանին՝ անմեղների...։

Դատարան։

Այդ է որ երեք տարուց իվեր արտասուքով և բողոքով, լռելեայն և ճիչով պահանջում են փակ դռների յետև ճզմված Հայերը։ Այդ է որ ուզում է Կովկասահայ ժողովուրդը և ամբողջ Հայութիւնը, աշխարհի բոլոր ծայրերում։

Իսկ դատարանը չը կայ։ Չը կայ, որովհետև հերոսները այդ տխուր ողբերգութեան, լաւ գիտեն որ դատարանի առջև պէտք է փաստեր լինին, հանդէս պիտի գան ապացոյցներ, և օրէնքի տրամաբանութեան դիմացող բացատրութիւններ։— Այդ բոլորը չը կայ։ Ահա թէ ինչու այսքան ձգձգեցին, յետաձգեցին, որպէսզի բանտային խցիկի մէջ լռեցնեն ըմբոստ խղճերը, և այդ տանջանքով՝ սարսափ գձեն ամբողջ Հայ ժողովրդի վրայ, ու մարեն այն չունչը, որ ատելի է Ռուս բռնապետութեան՝ Ֆինլանտիայից մինչեւ Արարատեան երկիրը...։

Generated on 2018-06-08 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Եւ նոյն այդ պատճառով՝ ոստիկան կառավարութիւնը ամէն ջանք թափել է և պիտի թափէ դանֆակ անելու դատը՝ թոյլ չը տալու, որ ժողովրդական աչքը, մանաւանդ արտասահմանի աչքերը թափանցեն դատարանի ներսերը, և հրապարակ բերեն վրդովիչ անարդարութեան սոսկալի փաստերը։

Պիտի յաջողի՞ն արդեօք։

Generated on 2018-06-01 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ՌՈՒՍ

ԲԻՒՐՕԿՐԱՍԻՆ

Կար ժամանակ, որ Անդրկովկասը հնոցն էր Ռուսասիրական հովերի։ Բոլոր ցեղերը և բոլոր Քրիստոնեայ ազգերը իրանց աչքերը դարձրել էին դէպի Հիւսիսի արծիւը։ Գաղտնական մի անմեկնելի անմտութեամբ, 19-րդ դարու սկզբներին՝ Կովկասը, «վայրենի աշխարհը», աքսորավայր էր Ռուսների համար.— ան տեղ էին քշում անպէտք պաշտօնեաները, այն տեղ էին ուղարկում վատ սպաները։ Կովկաս աքսորվեցին «անհանգիստ» պօէտները Պուշկին, Լերմօնտով իրանց «մեղքերը» քաւելու համար։ Դարձեալ Կովկաս աքսորվեցին 1863-ին Լեհ քաղաքական գործողները, իրանց ազատասիրութիւնը հեռու աքսորավայրերու մէջ ողբալու...։

Սակայն եկողները՝ ատելու փոխարէն սիրեցին «աքսորավայրը»։ Տեսան գեղանի երկիրը իր սիրուն լեռներով, աննման «Մասիս»ը, սպիտակ Թագը գլխին, հպարտ Կազբեկը՝ ապաշխարհավայրը անյաղթ պրոմէթէոսի, որ երկնքից ազատութեան կրակը խլեց։ Գեղեցիկ Կուրը՝ մշտածիծաղ, Արաքսը՝ իր տխուր յիշատակներով։ Տեսան վարդերի և սոխակի հայրենիքը և սիրեցին։

Տեսան և բազմալեզու, բազմատարազ ժողովուրդները՝ լի սիրով դէպի Սպիտակ Ցարը, հաւատով դէպի շէկ Հիւսիսականները, նոյնիսկ

Generated on 2018-06-01 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

դէպի «Քրիստոնեայ» կոչակները։ Ու եկեղեցիները ամէն տեղ քաղաքներում թէ գիւղերի մէջ, վայելում էին սէր, յարգանք, անվերապահ մտերմութիւն։ Եւ ո՛չ մի հարսանիք, հեռաւոր գիւղերում, ո՛չ մի մկրտութեան հանդէս, քաղաքի մէջ, ո՛չ մի համախմբում չէր անցնի առանց օրհնանքի, առանց յիշատակութեան, երբ ծերունի քահանան առաջին բաժակը առած, կ'արտասանէր, խօսքը սրտաբուղխ հաւատարմութեան՝ «Թո՛ղ Աստուած հաստատ պահէ Ռուս թագաւորի թախտը...։»

Իսկ այժմ։

Այժմ՝ ատելութիւն, դէպի Ռուս Զինուորը, թշնամանք դէպի Ռուս պաշտօնեան, զինուորական թէ քաղաքացիական, ցաւ՝ դէպի անցածը, քէն՝ գալիք օրերի համար։

Եւ գլխաւոր պատճառը՝ ցարական բիւրոկրատի սպանիչ ոգին, նրա անվերապահ հալածանքը, դէպի այն, բոլորը՝ ինչ Ռուսական չէ, այլ տեղական, մի ոգի, որ նեղ է, ինչպէս ֆօշանի միտքը, բիրտ՝ ինչպէս օլիգարքը, և գրգռիչ՝ ինչպէս Ռիմսկօրը։ Այդ ոգին մի մարմնացած խբարութիւն է. — անարգանք դէպի տեղացու լեզուն, թշնամանք դէպի նրա գիրը, ատելութիւն դէպի նրա ազգութիւնը, արհամարհանք դէպի նրա կրօնը։

Եւ դրա հետ միատեղ՝ այդ Զինուորը՝ մեծ թէ փոքր, կամ կաշառակեր է, ծոյլ, հեղդ, և կամ չար ու հալածասէր, անծանօթ այն երկրին՝ որը պիտի կառավարէ,— և այդ պատճառով՝ ատելութեան ներշնչող՝ դէպի այն բոլորը, ինչ Ռուսական է և կառավարական։

Generated on 2018-06-01 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Ռուսական տիրապետության անցած պատմությունը Կովկասի մէջ, պարզեց մի դառն ճշմարտություն. — Ռուսը զօրեղ էր և գրաւիչ իբրեւ քրիստոնեական ոյժ։ Թառած երկու Մահմեդական պետություններու սահմանի վրայ, թէ՛ Հայ և թէ՛ Վրացի ժողովուրդը, ճնշված, ստրկացած Շահերի և Սուլթանների բռնության տակ, աներկբայ տենչացող էին Քրիստոնեայ Ռուսաստանի տիրապետության, իբրև միջոց՝ քաղաքական հանգստության։ Եւ գաղտնիք չէ, որ Կովկասի Վրացիներն էին, որ Հայերի աջակցությամբ և խրախուսանքով, հարթեցին Ռուսական տիրապետության ճամբան դէպի Կուրի և Արաքսի հովիտները։ Թիֆլիսի մէջ, քաղաքի կենտրոնում կառուցած «փառքի տաճար»-ի ճակատին — որ մուզէոն է Ռուսական զինուորական յաղթանակի — դրոշմված են, Ալեքսանդր I-ի հրովարտակի հետևեալ խօսքերը, ուղղված Վրաստանին, 1801-ին.

«Ո՛չ շահասիրության և ո՛չ էլ մեր սահ-
«մանները ընդլայնելու նպատակով է, որ մենք
«վերցնում ենք մեզ վրայ Վրաց թագաւորու-
«թիւնը կառավարելու ծանրությունը։ Այլ՝
«մարդկայնությունն ու ազնվությունն է միայն
«որ դնում է մեզ վրայ սրբազան պարտակա-
«նություն, ականջ դնել տանջվող ժողովրդի
«աղերսանքին և հիմնել Վրաստանում արդա-
«րադատ կառավարություն։»

Եւ ասելի չրջանում, որ քրիստոնեական չրջանն էր, Ռուսական տիրապետությունը գրաւիչ էր, Ռուս զօրքը սիրված։ Զինուորականությունը, նորանաճ երկրում ոտք հաստատելու համար, գու-

Generated on 2018-06-01 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ցէ և անկեղծօրէն, գիտէր յարգել երկրի բնիկ ժողովուրդը, նրա կեանքը, նրա սովորութիւնները։ Բարձր կառավարութիւնը ևս առիթը ձեռքից բաց չէր թողնում մտերմութիւն հաստատելու, ծայրագաւառի և կեդրոնի մէջ։ Ալեքսանդր I ինքը անձամբ գնաց Էջմիածին, Հայոց կրօնական կեդրոնավայրը, պաշտօնական այցի։ Թիֆլիս Վրաց ազնուականութեան և արքայական տան մէջ հաստատվեց մտերմական բարեկամութիւն։ Հայոց կաթողիկոսը, ազդեցիկ Արևելքի կրօնական կեանքի մէջ, և Կովկասեան փոխարքան յաճախ լաւագոյն բարեկամներ էին, օրինակ Ներսէս և Վլադիմիր։ Ներսէս կաթողիկոս ինքը, անցած Հայ կամաւորների գլուխը, 1827-ին կռուեց ընդդէմ Պարսկաստանի, Ռուսական տիրապետութիւնը մինչեւ Հին-Նախիջևան, մինչեւ Արաքս հասցնելու համար։ Վրացիները տուեցին Ռուսական բանակին փայլուն զօրավարներ Արևելեան Կովկասը տիրապետելու համար։ Եւ Հայերից դուրս եկան ականաւոր զինուորականներ— Լօրիս Մելիքով. Լազարեան, Տէր-Ղուկասով, և Շիշկովշիկեան—Թուրքիայի դէմ 1878-ին պատերազմ մղելու և յաղթանակելու համար։

Սակայն երբ սկսվեց Երկրորդ՝ իբրև թէ խաղաղ զարգացման շրջանը, Լինոշիկոյի շրջանը, ամէն ինչ տակնուվրայ եղաւ։ Ռուս զինուորականութեան յաջորդող պետական այժը՝ Բիւրոկրատիան. «չինածը քանդեց»։ Ցարաշունչ Լինոշիկը անկարող է ստեղծելու և կառավարելու, գիտէ միայն հրամայել, «ռուսացնել», անանցանելի անջրպետ բանալ այլևայլ տարրերի մէջ։ Ո՛չ միայն սուրը և էպոլէտը, այլ և օրէնքը պաղու-

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-01 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեան աղբիւր եղաւ։ Դատարան, վարչատուն, ոստիկանաց դարձան վայրեր խաբի, վախի ու կաշառքի։ Արհամարհված և խաբված ժողովուրդը սկսեց վախնալ, խորշիլ, ու ատել։ Ատել ու մեկուսանալ։

Աւելացրէք այդ բոլորին նորագոյն Ռուս պաշտօնեայի հակազգային, հակառամկավար, հակաժողովրդական ոգին, որը կազմում է ցարական բիւրոկրասիի ուղն ու ծուծը։ Նա ատում է տեղական ժողովուրդների ազգութիւնը, քաղաքական շարժումը, նրա ինքնուրոյնութեան որևէ նշանը։ Լեհաստանում՝ նա Լէհին է թշնամին, Ֆինլանդիայում՝ ատում է Ֆիններին, Կովկասի մէջ՝ նա տեսնել չէ կարող Հայը։ — Եւ այդ բոլորը միասին, իբրև սիստէմ և ռէժիմ, ստեղծեցին այն, ինչ տեսնում ենք այժմ, բարեկամութեան փոխարէն — թշնամանք, համակրանքի տեղ՝ ատելութիւն, քէն ու ֆշշոց...։

Փոքրիկ մի համեմատութիւն։—

Հին շրջանում Երկիրը յանձնում էին Վօրոնցովին, դրաւելու տեղական տարրերը, նոր շրջանում՝ յանձնում են Գոլիցինին, տանջելու տեղական ազգերը։ Վօրոնցով դպրոցներ էր բանում. Գոլիցին միայն մի տարում 260 Հայ դպրոց գոցեց։

Անցեալի մէջ կառավարութիւնը շաղկապն էր տեղական ցեղերի, այժմ՝ պառակտող թոյնը։

Պետերբուրգից և Մոսկուայից երբեմն պաշտօնեաներ էին գալիս, օրէնք հաստատելու. այժմ հազարներով լրտեսներ են գալիս, բանտերը լեցնելու։

Երբեմն Հայ և Վրացի կամաւորներն էին զար-

Generated on 2018-06-01 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

դը պաշտօնական ընդունելութեան և կամ մեծ թաղումների ժամանակ, իսկ այժմ ոստիկանութիւնը մտրակով է քշում ժողովուրդը, կառավարչապետին կամ նահանգապետին ընդունելութիւն անելու։

Մի ժամանակ ամբողջ Թիֆլիսը ոտքի էր կանգնում ընդունելու էկզարքը, — Օրթօտօքս եկեղեցու պետը —, իսկ 1908-ին Ռուս էկզարքը տէրրօրի ենթարկվեց վրացուց և թաղմանը ոչ ոք կար, բացի ոստիկանութիւնից և պաշտօնէութիւնից։

Հին օրերին, վտանգի ժամանակ մարդիկ դէպի ժանտարմն ու ոստիկանը էին վազում, իսկ այժմ փախչում են նրանից, իբրև ժանտախտից։

Մինչև 1870-ը Ռուսական տիրապետ մը երկրի բարձրացման խթանն էր, իսկ այժմ կաշկանդող շղթան։

Ցանկալի հիւր էր երբեմն այդ կառավարութիւնը, բայց այժմ...։

Մի ծերունի Հայ պաշտօնեայ, որի պապը կռուել էր Ռուս զօրքերի շարքում, Ղարաբաղը տիրելու ժամանակ, ասում էր, թափ տալով ալեզարդ գլուխը.—

— Ա՛խ, չը մեռնիմ, տեսնեմ այդ Ռուսների փախը Կովկասից, էլ տարտ չիմ ունենայ, կը մեռնիմ հանգիստ...։

Պապերը կանչեցին Ռուսներին։

Որդիք նրանց փախն են երազում...։

Ահա պատուղը՝ կառավարական բռնաւոր, ըստանիչ սիստէմին.— նա իր սեփական փանջ դըժ-

Generated on 2018-06-01 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

բաղդացրեց Ռուս ժողովուրդը, այդ ովկիանո՛սը վշտի և ապիտութեան, և դուրս եկած ասն սահմաններից՝ ատելութիւն և թոյն է տարածում և՛ օտար ժողովուրդների մէջ, ամէն տեղ, ուր ոտք է դնում ապիկար Բիւրոկրասին, ուր հասնում է շունչը բռնապետ բէժիմի...։

Generated on 2018-06-01 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԲՈՂՈՔԸ

Որքա՜ն արտասուք բանտերի շուրջը։ Ի՜ն հեկեկանք և մորմոք աքսորի ճամբաներին։ Դառն աղերսանքներ ոստիկանոցի պատերի տակ և սպասումի անվերջ ժամեր քննիչին դռների մօտ։

Ոստիկան և Քննիչ։

Մի-մի ցարեր են նրանք իրանց «տան» մէջ-լուռ, երբ պէտք է պատասխանել, ժայթքումներով, երբ պէտք է լռել։

Ու նոյն տեսարանը ամէն տեղ.— կին, քոյր, եղբայր, զաւակներ, հկած, ով գիտէ, որ նահանգից, քանի օրվան ճամբայ, և ի՛նչ զրկանքներով։ Նա ուզում է տեսնել հիւանդ բանտարկեալը։— Իրաւունք չկայ։ Ուզում է դրամ, հագուստ, մի կտոր ուտելիք տալ—իրաւունք չըկայ։ Ուզում է կացութեան մասին երկու խօսք փոխանակել հարկաւ, լրտես-ոստիկանի հսկողութեան տակ—իրաւունք չը կայ։

Բոլորը՝ միասին և ամէնքը՝ առանձին առանձին խնդրում, ուզում են Քննիչը տեսնել, քանի մի հարց տալ, մի լուր ստանալ — նոյն պատասխանը. «Չէ կարելի, ի՛նչ ունէք, գրաւոր տուէք։»

Տալիս են և գրաւոր, և սպասում են օրեր, շաբաթներ, նոյնիսկ մի ամիս — ո՛չ մի պատասխան։ Փոքրիկ ցարը, շրջապատված լրտեսական վոհմակով, անողոք է, հպարտ և յանդուգն։ Հպարտ՝ որ փոխանակ ինքը գնալու կալանաւոր-

Generated on 2018-06-01 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

ների բնակավայրը, ընդհակառակը մի քանի հարիւր կալանաւորներ, 4–5 օրվայ ճամբայ բերել է տուել իր «գահի ոտքերի» մօտ, Կովկասից մինչեւ Բօստօվ և Նովոչէրկասակ — և հետը միասին նրանց ազգականները, սիրելիները, որոնք, ո՛վ գիտէ, ճամբու ծախք չունին, ապրուստ չունին, և տանը թողել են փոքրիկ երեխաներ, աղքատութեան ու պատահականութեան ենթակայ...:

Թո՛ղ սպասեն, թո՛ղ տանջվին:
Չէ որ հպատակներ են:

... Ու համբերութիւնը հատած, սպառած մարդկային համակերպման բոլոր ձևերը, վերջապէս ծայր տուեց տրտունջն ու դժգոհութիւնը, անխուսափելի բորբոքը արդար ցասման:

Այդ տրտունջը հասաւ մինչև պետական Դուման, որ թէև ճզմված ու խեղդուկ, մի-մի անգամ ճզալու թոյլ փորձեր է անում: Այն տեղ «Օրէնսդիր բարձր ժողովի» մէջ քանի մի պատգամաւորներ արձագանգ տուին հանուր դժգոհութեան և հարց յարուցին: Մեծ թիւրիմացութիւն է, ասացին նրանք, մի ամբողջ ազգ «յեղափոխական» երևակայել և այդքան խստօրէն հալածել...

Միջամտեց և Հայոց Կաթողիկոսը: 1909-ի յուլիսին, երբ Իզմիրլեան Պօլսից Պետերբուրգ գնաց և ցարին ներկայացաւ, իր պաշտօնական ճառի մէջ ասաց.

«Եթէ կամենում էք, Ձերդ Մեծութիւն, «որ Կովկաս հասնելով, կարողանամ ազդել և «խաղաղեցնել մտքերը, կապել Հայ ժողովուրդը գահի հետ, բարեհաճեցէ՛ք կատարել իմ

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-01 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«ամենահպատակ խնդիրը, Հայ կալանաւորների «արձակման հրամանը տուէք, որով ինձ էլ այժ «տուած կը լինիք՝ օգտակար կերպով ծառայե- «լու պետութեան։»

Նիկոլա I, ողորմութեամբն Աստուծոյ կայսր համայն Ռուսաստանի, ընդմիջեց կաթողիկոսի ճառը և արտասանեց այս խօսքերը.

«Ձերդ Օծութիւնը դեռ Կովկաս չը հասած, «նրանք ազատված կը լինեն։»

Ցուսադրված կաթողիկոսը գնաց Կովկաս, անցաւ քաղաքից քաղաք, հպարտ՝ իրան տրուած կայսերական խոստումով, սակայն բանտարկեալ- ները ո՛չ միայն ազատ չ՝արձակվեցան, այլ նրանց թիւը կրկնապատկվեց...։

Ն.ԵՐՔԻՆ աղերսանքն ու բողոքը լսելի չ՝եղաւ, չ՝ազդեց գահի պաշտպանների սրտի ու մտքին վրայ։ Բնական է ուրեմն և ժամանակ, որ այդ տրտունջն ու բողոքը հնչէ դուրսը, ցարական սահ- մանների միւս կողմը, ցոյց տալու ՍՐՊՈՒՆ աշ- խարհին՝ գէթ մի էջը այն ողբերգական տեսա- րանների, որոնց թատերաբեմն է ինքնակալի բանտն ու աքսորավայրը, այն աշխարհը, ուր պարլամէնտ կայ, բայց սահմանադրութիւն չկայ, ուր օրինագիրք կայ, բայց արդարութիւն չկայ...։

Բողոք։

Բողոք և համակրանք։

Այդ է պահանջը տանջուող Արևելքի, արդար փափաքը ազատութեան մարտիկների, Ռուս, Լէհ, Հայ, Ֆինն, Հրեայ, Վրացի, որոնք չդիմա՛յի

Generated on 2018-06-01 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

տակ թէ զնտանի մէջ, կախաղանի վրայ թէ հրացանի գիմաց, մի տենջանք ունին ու մի սփոփանք,—քաջալերիչ ձայներ խրախուսանք բոլոր բերաններից, որոնք բռնութիւնը կ'ատեն, բոլոր երկրներում, ուր վառ է ջահը Ազատութեան...:

Ու այդ բողոքը այնքան լայն, որքան լայն է ինքը Տանջանքը, անծայր, ինչպէս անծայր է բռնութիւնը, և միջազգային, ինչպէս միջազգային է ինքը հալածանքը: Տանջուողներ միայն մի ազգի չեն պատկանում, բողոքն էլ մի ազգով չը պիտի սահմանափակվի:

Բողոք ո՛չ թէ մասնակի, այլ համատարած, բռնաշխարհի սահմանագլխից մինչեւ ծայրը Եւրոպայի, և այնտեղից մինչև Ամերիկա, մեծ Հանրապետութեան սահմանները, ամէն տեղ, ամէն երկրի մէջ, ուր ստրկութեան աւերակի վրայ՝ քաղաքակրթութեան դրօշն է պարզած:

Ամէն մի մարդ, որ միտք ունէ, ամէն մի քաղաքացի, որ խիղճ ունէ, ամէն մի արարած, որ սիրտ ունէ, պիտի բանայ իր բերանը՝ բողոքելու, իր լեզուն՝ համակրելու, իր ձեռքը՝ օգնելու:

Մարդկայնութեան պարտականութիւնն է այդ: Տանջվող ազգերը և մարդիկ ներկայ օրերին այլևս միայն իրանց ցեղին և համայնքին չեն պատկանում, այլ ամբողջ մարդկութեան: Եւ բռնապետութեան ոտքերի տակ տրորվող դիակը անարգանք է ո՛չ միայն ստրուկ հայրենիքին, այլ ամբողջ աշխարհին:

«Հասել է ժամանակը—ասում է Կալիֆոր-
«նիայի պարլամէնտը Մարտ 23-ի մի որոշման
«մէջ—երբ ամէն մի քաղաքակիրթ ազգ պէտք

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-01 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Է բողոքն ուրիշ ո՛և է ազգի այդ օրինակ ա-
«տարքների դէմ, և մենք սրանով արտայայ-
«տում ենք մեր զղջումանքը ընդդէմ այն վար-
«մունքին, որուն ենթարկված են Հայաստանի
«զաւակները, իրանց քաղաքական համոզում-
«ներին համար։ Ժամանակը հասել է, որ ներ-
«դաշնակ գործունէութիւն գոյութիւն ունե-
«նայ, իրենք իրանց քաղաքակրթված ու լու-
«սաւորված կարծող բոլոր ազգերի մէջ, ստի-
«պելու ո՛և է ազգ, որպէսզի մարդկութեան և
«տարրական արդարութեան օրէնքները ան-
«պատճառ գործ դնէ՝ հանդէպ իր քաղաքացի-
«ներու։(1)»

Եւ բողոքները հնչեցին հակառակ ցարական գործակալների ջանք ու արգելքին, մի օր Վիէնա, ուր Ընկերվարական Կուսակցութիւնը ցասման առաջին նշանը տուեց։ Մի օր Պոլիս —երէկեան ամրոցը բռնապետութեան— ուր Հայ, Թիւրք, Բոլգար, Երբեմնի հակոյժերը, միմիանց ձեռք տուին՝ բռնութեան ճակատը խարանելու։ Մի օր Պարիզ — խնկելի օրրանը միջազգային յեղափոխութեան—ուր լաւագոյն միտքերը միացան՝ հալածական արդարութիւնը պաշտպանելու։ Մի օր էլ Ատլանտեանի հակառակ կողմը, Ամերիկեան Մեծ Հանրապետութեան մէջ, ուր Սան-Ֆրանսիսկոյից մինչև Նիւ Եորք, բազմամարդ ժողովների մէջ կազմակերպված 15 քաղաքներում, միակամ և խարազանիչ որոշումներ քէարկվեցան, իբրև համակրանք տանջվողներին, և նախագիծ մոդակիրներին որոնք օրէնքի և կրօնի անուան տակ Եղեռն են տարածում, երկրագնդի այս ապաքաղաք

(1) Ոսկեան ամրոցական «Որոշումը» տե՛ս Բ-նլ-ում մէջ։

Generated on 2018-06-01 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

հատուածի վրայ, որ ցարական «սեփականութիւնն» է կազմում։

Միացնենք այդ բողոքները, բոլոր ձայները։ Կաթիլ կաթիլ ծով կը լինի։

Ու այդ միացումով ստեղծենք հուժկու և գոռ կոչը, համակրանքի և բողոքի զօրեղ ալիքը որ պիտի զովացնէ անմեղ զոհերը բոլոր ազգերի, սիրտ տայ նրանց, նոր ոյժ՝ դարձեալ դիմանալու, դարձեալ սիրելու, դարձեալ դարբնելու Ազատութեան գաղափարը, նոյնիսկ ընտանիների մէջ, ուր արև չըկայ, բայց երազ կայ, ուր խուցը փոքր է, սիրտը՝ մեծ, մարմինը վտիտ՝ հոգին զօրեղ։

Համատարած, միջազգային համակրանքի մէջն է՝ խրախոյսը բոլոր երկիրների մարտիկների։

Համատարած, միջազգային անարգանքի մէջն է՝ մահաթոյնը բոլոր երկիրների բռնաւորների։

....

Սա մի էջն է միայն, փոքրիկ հատուածը քաղաքական մեծ առնչանքի, նոյնքան ծաւալուն որքան ինքը Ռուսաստանը, նոյնքան անհատնում, որքան ալիքները սգաւոր վոլգայի։

«Մենք կը մեռնենք հանգիստ խղճով և առանց զղջման —կոչեց ազատութեան Ռուս կամաւորը՝ կախազանի ստանդուխից — այն խորունկ համոզմամբ, որ մեզանից յետոյ պիտի գան նորերը, աւելի քաջ քան մենք, աւելի մեծ քան նախորդ-

ները, մինչև որ ազատութեան փոթորիկը, հիմ-քից կործանէ այս կարմիր բռնապետութիւնը, որ անէծքն է համայն Ռուսաստանի և նախատինքը ամբողջ մարդկութեան»։

Եկան հարիւրներով.
Գիտի գան հազարներով։

Մեծ տանջանքը նախանշանն է մեծ երկուն-քի, մայրը գալիք մեծ օրուան։

Զարկեցէք, քաջե՛ր, մօտ է այդ օրը։

Իսկ դուք, բարեկամներ ազատութեան, սաստկացրէք բողոքը — անկասկած է յաղթա-նակը։

Generated on 2018-06-01 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

ՅԱՒԵԼՒԱԾ

Generated on 2018-06-01 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Միացեալ Նահանգներու և Կանատայի երեսունըհինգ քաղաքներուն մէջ տեղի ունեցան միթինկներ ի նպաստ Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու։ Տասն և հինգ քաղաքներու մէջ — Նիւ Եօրք, Ֆիլատէլֆիա, Շիկագո, Բոստոն, Պրովիտէնս, Ուստր, Տրոյ, Ուէստ Հոբոկըն, Նիւ Հէյվըն, Սան-Ֆրանսիսկո, Լոզ-Անճէլէս, Ֆրէզնո, Բրանդֆորտ, և Համիլտոն — բողոքի բանաձևեր քէարկուեցան, և գրկուեցան Հանրապետութեան Նախագահին, Արտաքին Գործերու Նախարարութեան, Կոնգրէսի անդամներուն, օտար դեսպաններէ ոմանց, մասնաւորապէս Ռուսիոյ դեսպանին (1)։ Որոշումներէն օրինակներ յանձնուեցան տեղային թերթերուն՝ հրատարակութեան համար։

Ստորև կը ներկայացնենք այդ որոշումներ ը։

Նիւ Եօրք

Նիւ-Եօրքաբնակ Հայերու կողմանէ 1911 Փետրվար 5-ին Կարնիգի Լայսիումի մէջ սարքուած միթինկի մը մէջ անցան հետևեալ որոշումները.

1. Նկատելով որ երկու տարիէ ի վեր աւելի քան հինգ հարիւր Հայեր —պրոֆէսորներ, հեղի-

(1) Ռուսական դեսպանութիւնը, տարօրինակ ըմբռնումով մը, երկու անգամ պատասխանեց Թէ չէր կրնար ընդունիլ այդ որոշումները։ Այդ է եղանակը Ռուսիոյ մէջ գործ տեսնելու։

Generated on 2018-06-01 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

նակներ, բժիշկներ. իրաւաբաններ, վաճառականներ, արհեստաւորներ և գիւղացիներ— կ'ենթարկուին անասանելի տանջանքներու Ռուսիոյ մէջ, առանց հացի և կերակուրի։

2. Նկատելով որ 10–15 հոգի զետեղուած են խոնաւ և ցրտին խուցի մը մէջ։

3. Նկատելով որ այս աննկարագրելի վիճակը տակաւին կը շարունակուի և դատավարութիւնը կը ձգձգուի կամայականօրէն։

4. Նկատելով որ Ռուսական կառավարութիւնը կը ջանայ պատժել անմեղ ժողովուրդ մը ոճիրներու համար՝ զոր գործած չեն ամբաստանեալները։

Այս Մեծ Հանրապետութեան Հայ քաղաքացիները կ'որոշեն բողոքել,

1. Ռուսական կառավարութեան անմարդկային ընթացքին դէմ և պահանջել անմեղ զոհերու անմիջական և արդար դատավարութիւնը։

2. Ղրկել օրինակ մը այս որոշումներէն Վաշինգտոնի կառավարութեան, և խնդրել որ հաճին միջամտել ինպատ անմեղ զոհերուն, իրենց յարմար դատած եղանակով։

3. Ղրկել այն որոշումներէն մէյմէկ օրինակ օտար տէրութիւններու ներկայացուցիչներու Վաշինգտոնի մէջ, և Ամերիկեան մամուլին, և խնդրել որ ձայն բարձրացնեն յանուն քաղաքակիր իրաւունքներուն ժողովուրդի մը, որ անարդարօրէն կը հալածուի Կովկասի մէջ։

Ֆիլատէլֆիա

1911 Փետր. 12-ին, Ֆիլատէլֆիոյի մէջ Հա-

Generated on 2018-06-01 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

յերու կողմանէ սարքուած միթինկի մը մէջ, ուր ատենախօսութիւններ եղան Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու մասին, հետևեալ որոշումները անցան.

Նկատելով որ, թուով 500 բանտարկեալները սոսկ զոհերն են Ռուսական Կառավարութեան կանխամտածուած և անարդար մէկ քաղաքականութեան։

Նկատելով որ, բանտարկեալները ենթարկըուած են անտանելի պայմաններու, զուրկ կերակուրէ, հանդերձէ, և արտաքին հաղորդակցութենէ, որոշուեցաւ.

1. Բողոքել Ռուսական Կառավարութեան հակահայկական և անարդար հալածանքին դէմ։

2. Պահանջել բանտարկեալներու անմիջական դատավարութիւնը, ազատ ոստիկանական բռնութենէ։

3. Ղրկել սոյն բողոքէն մէյմէկ օրինակ Վաշինգտոնի Կառավարութեան և օտար տէրութիւններու դեսպաններուն։

Նոյն առթով ժողովը կոչում կ'ընէ Ամերիկեան մամուլին ձայնակցելու ի պաշտպանութիւն այս արդար դատին։

Բոսթոն

Հրապարակային միթինկ մը տեղի ունեցաւ, 1911 Յունվար 8 ի երեկոյ Պէյն Մէմորիալ Հոլի մէջ, Բոսթոն, ուր աւելի քան հազար Հայեր ներկայ էին, որոնք որոշումներ անցուցին բողոքելու համար բանտարկութեանը դէմ իրենց ականաւոր ազգակիցներուն, թուով հինգ հարիւր, որոնք կը մաշին Ռուսիոյ բանտերուն մէջ։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-01 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ժողովին կը նախագահէր Տօքթ. Վ. Գազանճեան։ Խօսեցաւ իմիջի այլոց Է. Ակնունի, Կ. Գալէն։

Հանգանակութիւն մը տեղի ունեցաւ ի նպաստ բանտարկեալներուն և հետևեալ որոշումները քննարկուեցան.

Նկատելով որ Ռուսիոյ ներկայ Կառավարութիւնը դիտումնաւոր կերպով սկսած է մասնաւոր հալածանք մը Կովկասահայութեան դէմ։

Նկատելով որ հինգ հարիւր հայերը — գրագէտներ, գիտուններ, վաճառականներ են. ուղղակի զոհերն են վերոյիշեալ հալածանքին, առանց ո՛և է օրինական և բարոյական արդարացումի, որոշուեցաւ.

1. Բողոքել Ռուսիոյ այդ Կառավարութեան քաղաքականութեան դէմ, որ հակառակ է Սահմանադրութեան ոգիին, ինչպէս նաև քաղաքակրթութեան պահանջներուն։

2. Պահանջել անմիջական դատավարութիւն արդար ատեանի մը առջև, հաստատելու իրենց իրաւունքները իբրև հաւատարիմ քաղաքացիներ։

3. Ղրկել սոյն որոշումներէն մէյմէկ օրինակ Միացեալ Նահանգներու Արտաքին Գործերու Նախարարութեան, Վաշինգտոնի Ռուսական դեսպանին ինչպէս նաև օտար տէրութիւններու բոլոր ներկայացուցիչներուն։

4. Դիմել Միաց. Նահանգներու հանրային կարծիքին, ստեղծելու համար համակրական շարժում մը ի նպաստ Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու, որոնց միակ պահանջն է վայելել Սահմանադրութեան բարիքները և այն տարրական իրաւունքները, զոր կը վայելէ մէն մի քաղաքակրթուած հասարակութիւն։

Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY
Generated on 2018-06-01 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սան. Ֆրանսիսկո

Տեղեկանալով Պն. Է. Ակնունիի — Հայ գրող մը Կ. Պոլսէն — մեզի հաղորդած տեղեկութիւններէն և Միացեալ-Նահանգներու Հայ քաղաքացիներու վկայութիւններէն, որ մօտ 260 դիրքի և դաստիարակութեան տէր Հայեր տարիներով բանտարկուած կը մնան Նովոչէրկասկի բանտը, միապետական Ռուսիոյ մէջ, քաղաքական պատճառներով, առանց նախնական քննութեան և առանց ո՛եւէ պատեհութիւն տալու, որ իրենց դատը ներկայացնեն արդար ատեանի մը, և նկատելով որ այդպիսի բանտարկութիւն մը ընդվզեցուցիչ է արդարութեան զգացումին առջև, ո՛եւէ Երկրի մէջ,

Նկատելով դարձեալ, որ վերոյիշեալ Հայ քաղաքացիները մասնաւոր որոշումներով արդարացիօրէն բողոքած են սոյն բանտարկութիւններու դէմ, ուստի մենք ստորագրեալներս եւս, Սան-Ֆրանսիսկո քաղաքին և գաւառի բնակիչներս, քաղաքացիներս և կազմակերպութիւնները կ՝որոշենք,

1. Բողոքել սոյն բանտարկութիւններու դէմ, և խնդրել մեր ներկայացուցիչներէն Կոնգրէսի մէջ, որ գործածեն իրենց կարողութեան մէջ եղած ամէն օրինաւոր և պատուաւոր միջոց իրերու այս վիճակը Ռուսական կառավարութեան ուշադրութեան յանձնելու այնպիսի եղանակով մը, որ առաջնորդէ անմիջական քննութեան և դատելու արդար կարգադրութեանը։

2. Ղրկել սոյն որոշումներէն մէյմէկ օրինակ Կալիֆորնիոյ Ծերակոյտի և Կոնգրէսի անդամներէն իւրաքանչիւրին, Միացեալ Նահանգներու

Generated on 2018-06-01 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Նախագահին, և ամէն այն մարդոց, որոնք կըրնան նպաստել յառաջ բերելու այս բաղձացեալ վախճանը։

Սան Ֆրանսիսկո, Կալ.
Յունվար 17,1911

Պրովիդենս

Հրապարակային միթինկի մը մէջ, որ տեղի ունեցաւ 1910 Դեկտ. 25ին, Պրովիդենս, հաւաքուած էին հազարէն աւելի Հայեր, բողոքելու համար Ռուսական կառավարութեան հակամարդկային վերաբերումին դէմ, որուն ենթարկուած են աւելի քան հինգ հարիւր Հայեր։

Ժողովին կը նախագահէր Պն. Թ. Ճէլալեան։ Ի մէջ այլոց խօսեցաւ Պն. Է. Ակնունի, Կ. Պոլսէն։ Հետևեալ որոշումները անցան։

Նկատելով որ Ռուսական կառավարութիւնը դիտումնաւոր և կանխամտածուած քաղաքականութիւնով մը սկսած է ընդհանուր հալածանք Կովկասահայերու դէմ,

Նկատելով որ՝ հինգ հարիւր Հայեր, ամէն խաւէ, — ուսուցիչ, բժիշկ, գիտուն, գրագէտ, վաճառական, և ն. — զոհերը դարձած են սոյն քաղաքականութեան, առանց օրինական հիմքի և դատավարութեան,

Որոշուեցաւ,

1. Բողոքել Ռուսական կառավարութեան այս քաղաքականութեան դէմ, որ նախատինք մըն է Պահմանադրութեան, ինչպէս նաև քաղաքակըրթութեան գաղափարին։

2. Պահանջել բանտարկեալներու անմիջական

Generated on 2018-06-01 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

դատավարութիւնը և արձակումը, ու անոնց բոլոր իրաւունքներուն ճանաչումը, իբրև հաւասարիմ քաղաքացիներ,

3. Ղրկել այս որոշումներէն մէյ մէկ օրինակ Միացեալ-Նահանգներու Վաշինգտոնի Կառավարութեան և Վաշինգտոնի Ռուսաց դեսպանին,

4. Կոչում ընել այս երկրի հանրային կարծիքին և ստեղծել համակրական շարժում մը ինչպէս այն Հայ բանտարկեալներուն, որոնց միակ փափաքն ու պահանջն է Կովկասի մէջ կարենալ վայելել Սահմանադրութեան առանձնաշնորհումները և այն տարրական իրաւունքները, որ կը վայելէ ամէն քաղաքակրթուած հասարակութիւն։

Ուստ

1911 Յունվար 15-ին Ուստրաբնակ Հայերը, հաւաքուած Իկլ Հօլի մէջ իրենց համակրանքը արտայայտելու և օգնելու նիւթապէս Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու, քննարկեցին հետեւեալ որոշումները.

Նկատելով որ՝ Ռուսիոյ բանտերը նետուած հինգ հարիւրէն աւելի Հայերը ընտրելագոյն, մասը կը կազմեն Հայ ներկայ սերունդին քաղաքականապէս թէ իմացականապէս,

Նկատելով որ, այս մարդիկը վերջին երկու տարին անբացատրելի տանջանքներու ենթարկուած են Ռուսիոյ գարշահոտ բանտերուն մէջ առանց դատավարութեան և օրինական պատճառի, որոշեցաւ,

1. Բողոքել Ռուսական Կառավարութեան դէմ

Generated on 2018-06-01 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

իւր Հայ մտաւորական առաջնորդները հալածելու կանխամտածուած քաղաքականութեան համար,

2. Պահանջել անմիջական դատավարութիւն այս մարդոց համար, և ճանաչումը իրենց օրինական իրաւունքներուն իբր քաղաքացիներ,

3. Ղրկել սոյն որոշումներէն մէյմէկ օրինակ Միացեալ Նահանգներու Արտաքին Գործերու Նախարարութեան, Վաշինգտոնի Ռուսական դեսպանին և գոյացնելու հանրային զգացում և համակրանք դէպի այս անբաղդ բանտարկեալները։

Տրոյ

1911, Յունվար 22-ին հրապարակային ժողով մը տեղի ունեցաւ Պրոկտորս Թիէտրրի մէջ, Տրոյ։ Ժողովին նպատակն էր ստեղծել հանրային զգացում և համակրանք, ինպաստ հինգ հարիւրէն աւելի Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու, որոնք կը կազմեն ներկայացուցիչները՝ Հայ գեղարուեստի, գրականութեան և գիտութեան։

Հետևեալ որոշումները անցան.

Նկատելով որ՝ Ռուսական Կառավարութիւնը կը հետևի հալածանքի քաղաքականութեան մը՝ ընդդէմ Կովկասահայերու,

Նկատելով որ, Կովկասահայերու դէմ սկըսուած հալածանքը հակառակ է ո՛չ թէ միայն Սահմանադրութեան տառին և ոգիին, հապա ամբողջ Հայ ցեղին, որոշուեցաւ,

1. Բողոքել Ռուսական Կառավարութեան դէմ այս անարդար բանտարկութեան դէմ, և պահանջել յարմար միջոցներով՝ անմիջական և արդար

Generated on 2018-06-01 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

դատավարութիւն ատեանի մը առջև, որ ըլլայ ո՛չ թէ միայն ձեռնհաս՝ հապա և զերծ զինուորական բռնութենէ։

2. Ղրկել այս որոշումներէն օրինակ մը Միաց. Նահանգներու Վաշինգտոնի Կառավարութեան, և խնդրել իւր աջակցութիւնը այս գործին մէջ,

3. Կոչում ընել Ամերիկեան հասարակութեան և արթնցնել հանրային կարծիքն ու համակրութիւնը այս մարդոց անարդար բանտարկութեան հանդէպ։

Ուէստ Հոպոկրն

Հրապարակային մեծ ժողովի մը մէջ, որ սարքըւեցաւ Հայերու կողմանէ, 1911, Փետր. 5-ին, Ուէստ Հոպոկրնի մէջ, քէարկուեցան և միաձայնութեամբ ընդունուեցան հետևեալ որոշումները.

Նկատելով որ, մեր հայրենակիցները Ռուսիոյ մէջ ենթարկուած են անողոք հալածանքներու, և մօտ հինգ հարիւր հոգիներ կը տանջուին Բօստովի, Նովոչէրկասկի և ուրիշ քաղաքներու մէջ։

Նկատելով որ, անմեղներ կը ձերբակալուին առանց պատճառի և հակառակ անոնց պահանջներուն չեն դատուիր,

Նկատելով որ, այդ խմբական ձերբակալումները հետևանք են Ռուսական Կառավարութեան մասնաւոր մէկ քաղաքականութեանը, որ կ'անտեսէ Ռուսահայերու ամենատարրական իրաւունքները, որոշուեցաւ,

1. Բողոքել Ռուսական Կառավարութեան գործադրած անարդարութեան դէմ, և պահանջել որ դատավարութիւնը ազատ ըլլայ ոստիկանական միջամտութենէ և ճնշումներէ,

Generated on 2018-06-01 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/mnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

2. Ղրկել սոյն որոշումներէն մէյմէկ օրինակ Արտաքին Գործերու Նախարարութեան, և Վաշինգտոնի բոլոր դեսպանութիւններուն, խնդրելով որ իրենց ազդեցութիւնը գործածեն յանուն բանտարկեալներու,

3. Ղրկել օրինակ մը նաև Ամերիկեան մամուլին և կոչում ընել այս երկրի քաղաքական հարցերով զբաղուող գրողներու, որ իգործ դնեն իրենց ազդեցութիւնը ինպաստ թուով հինգ հարիւր անբաղդ Հայ կալանաւորներու։

Կալիֆորնիա

Տեղեկանալով որ, թուով հինգ հարիւր դաստիարակութեան, դիրքի և աստիճանի տէր Հայեր՝ բանտարկուած են Ռոստովի և Նովոչէրկասկի բանտերուն մէջ, քաղաքական պատճառներով, և կը սպասեն երկար ատենէ ի վեր առանց նախնական քննութեան և ո՛և է պատեհութեան մը, իրենց դատերը ներկայացնելու արդարութեան ատեանի մը առջև, — ինչ որ ընդվզեցուցիչ է մարդկային ազգի արդարութեան զգացումին առջև — մենք յանուն Կալիֆորնիա Սթէյթ Ֆէթերէյշըն օվ Լէյբըրի, կը բողոքենք այդ բանտարկութիւններու դէմ և կ'որոշենք խնդրել Կալիֆորնիայի Նահանգին Կառավարիչ Պրն. Հերամ Վ. Ջոնսընէն, և Նահանգիս Օրէնսդրական Մարմինէն, որ ձեռնարկեն այնպիսի միջոցներու օրինական կամ այլ կերպ, որով կարելի ըլլայ իրերու այս վիճակը ամենէն ազդու կերպով ներկայացնել Միացեալ Նահանգներու Կառավարութեան, որը իր կարգին խնդիրը ներկայացնէ Ռուսական Կառավարութեան, ակներև անարդարութիւնը դարմանելու համար, և,

Generated on 2018-06-01 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

2. Ղրկել այն որոշումէն մէյ-մէկ օրինակ՝ Միացեալ-Նահանգներու Նախագահին, Կալիֆորնիայի ծերակուտականներուն և ներկայացուցիչներուն, Արտաքին Գործերու Նախարարութեան, Կալիֆորնիայի Նահանգի կառավարիչին և ներկայացուցիչներուն ու ծերակուտականներուն։

Կալիֆորնիայի Օրէնսդրական Մարմնոյ Որոշումները

(Ընդունուած Ծերակոյտի և Օրէնսդրական ժողովի մէջ, Մարտ 21-22ին և ղրկուած Վաշինգտոն Մարտ 27-ին)

Նկատելով որ, Ռուսական Կառավարութիւնը բանտարկած է հարիւրաւոր ծանօթ Հայեր.— ուսուցիչներ, իրաւաբաններ և խմբագիրներ, բոլորն ալ առաջապահներ, առաջադէմ խորհրդութեան և գործունէութեան, Բօստովի և ուրիշ քաղաքներու մէջ, և երկար ատենէ իվեր պահած է զանոնք առանց նախնական քննութեան կամ պատեհութեան իրենց դատերը ներկայացնելու դատական ատեանի մը, ինչ որ ընդվզեցուցիչ է արդարութեան մարդկային զգացումին,

Նկատելով որ, Ռուսական Կառավարութիւնը յաճախ թոյլատրած է խառնակութիւններ, կողոպուտ, բռնութիւններ և սպաննութիւններ, մարդերու, կիներու և տղոց, իրենց կրօնական համոզումներուն պատճառով, և

Նկատելով որ, այսպիսի արարքներ նախատինք են քաղաքակրթութեան և խորշելի այն մարդոց համար, որոնք կը սիրեն արդարութիւնը և կը վախնան Աստուծմէ, Կալիֆորնիայի Նա-

Generated on 2018-06-01 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

հանգին Երեսունը իններորդ Օրէնսդրական Մարմինը, --Ներակուտականները և ներկայացուցիչները, հաւատալով թէ հասած է ժամանակը այս աշխարհի գործերու մէջ, երբ պէտք է ամէն քաղաքակրթուած ազգ բոլորքէ այսպիսի արարքի մը դէմ ուէ ազգի կողմէ գործուած, կ'որոշենք,

1. Արտայայտել մեր գարշանքը այն վերաբերումին համար, որ ի գործ կը դրուի Հայ մարդոց կիներու և տղոց դէմ, իրենց քաղաքական համոզումներուն և կրօնական հաւատալիքներուն համար,

2. Հասած նկատել ժամանակը մեր գաղափարով՝ երբ իրենք զիրենք քաղաքակրթուած և լուսաւորեալ հռչակող ազգերը պէտք է դաշնակցին ստիպելու ո՛ւէ ազգ, որ գործադրէ մարդկութեան և տարրական արդարութեան պահանջները իր քաղաքացիներուն հանդէպ,

3. Ղրկել այն որոշումներէն մէյմէկ օրինակ Միացեալ Նահանգներու Նախագահին, Ներակուտականներու Նախագահին, պատգամաւորներու ներկայացուցիչին գործածելու իրենց ազդեցութիւնը, ապահովելու վերոյիշեալ Հայերուն համար արդար դատավարութիւն առանց յապաղումի։

Generated on 2018-06-01 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-08 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY

COLUMBIA UNIVERSITY LIBRARIES
0053757084

Generated on 2018-06-01 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
COLUMBIA UNIVERSITY

Generated on 2018-06-01 11:27 GMT / http://hdl.handle.net/2027/nnc1.0053757084
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
COLUMBIA UNIVERSITY